



Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 69 APRIL / ԹԻՒ 69 ԱՊՐԻԼ 2023

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կիր., 2 Ապրիլ – Ինչպես տեղեկացուցած էինք Փարոսի նախորդ թիւին մէջ, Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան մեկնած էր Հնդկաստանի Կալկաթա քաղաքը, որպէս Հայրապետական Պատուիրակ Հնդկաստանի եւ Ծայրագոյն Արեւելքի երկիրներու: Սրբազանը Ծաղկազարդի առիթով Եպիսկոպոսական Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Կալկաթայի Հայոց Սուրբ Նազարէթ եկեղեցոյ մէջ: Սրբազան հօր սպասարկեցին Հոգեշնորհ Տէր Տաճատ Վարդապետ Ծատուրեան, Տեսուչ Կալկաթայի Մարդասիրական Ճեմարանին, եւ փոխտեսուչներ՝ Արծրուն Միքայէլեան եւ Հայկ Միքայէլեան վարդապետները: Սրբազանը տուաւ իր պատգամը: Պատարագին կը մասնակցէին Ճեմարանի սաները, որոնցմէ ոմանք՝ դպիրի պաշտօնով: Երկու օր առաջ, 31 Մարտին, Սրբազան հայրը այցելեց Մարդասիրական Ճեմարան ուր հանդիպում ունեցաւ աշակերտութեան եւ ուսուցչական կազմին հետ:



Սրբազանին այցը կը զուգադիպէր Հիմնադիրներու Օրուան 202րդ տարեդարձին: Այս տօնը մեծ շուքով կը տօնուի Մարդասիրական Ճեմարանին մէջ:



Տեղի ունեցաւ Ճեմարանի դահլիճին մէջ: Հնդիկ ուղղափառ եւ Հայ հոգեւոր հայրերու կողքին ներկայ էին դպրոցի տնօրէնուհի Տէպանճալի Զոտրի, դպրոցի խնամակալներ Սունիլ Սոպթի եւ Սուզան Ռուպէն:

Նախքան փակման աղօթք, իր փակման խօսքին մէջ Հայկազուն Սրբազան շեշտը դրաւ նոր սերունդի եւ նոր տաղանդներու դաստիարակութեան կարեւորութեան եւ այդ ուղղութեամբ Մարդասիրական Ճեմարանի ընձեռած առիթներուն վրայ:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Սրբազան հայրը հատեց 202րդ տարեդարձի կարկանդակը: Ի գործ դրուեցաւ գեղարունեստական կոկիկ յայտագիր: Սրբազան հայրը Միտնի վերադարձաւ Զորեքշաբթի 5 Ապրիլին:



Եշ., 6 Ապրիլ – Առաւօտուն, Սրբազան հայրը քահանայական պատարագ մատուցեց եւ քարոզեց Սուրբ Յարութին եկեղեցոյ մէջ: Կէսօրէ ետք ան կատարեց Ոտնլուայի արարողութիւնը իսկ երեկոյեան խաւարման արարողութիւնը:



Ուրբ., 7 Ապրիլ – Առաւօտուն տեղի ունեցաւ Կարգ Խաչելութեան իսկ երեկոյեան՝ Կարգ Թաղման, որմէ ետք ընդհանուր հոգեհանգիստ: Սրբազան հայրը իր հակիրճ քարոզին մէջ բացատրեց Խաչելութեան եւ թաղման խորհուրդները: Բացատրեց նաեւ խաւարին իմաստը, որ լոյսի բացակայութիւնն է: Լոյսը Աստուած Ինքն է, Քրիստոս Ինքն է լոյսը, հետեւաբար խաւար չի կրնար գոյութիւն ունենալ մեր կեանքին մէջ երբ Լոյսը՝ Քրիստոս ներկայ է մեր մէջ, պատգամեց Սրբազանը:

Շբ., 8 Ապրիլ - Սովորութիւն է որ Սրբազան Հայրը Ճրագալոյցի Պատարագ կը մատուցէ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ: Այս մասին կարդալ «Լուրեր Ծովսերէն» բաժինին մէջ:

Կիր., 9 Ապրիլ – Հասած էր յաղթանակի օրը, Քրիստոս յարութիւն առած էր մեռելներէն: Այս հրաշափառ տօնը ցնծութեան ու չարին վրայ տարուած յաղթանակի օր է: Սուրբ Յարութին եկեղեցոյ մէջ եպիսկոպոսական պատարագ մատուցեց Սրբազան հայրը, որուն սպասարկեցին Արժ Տէր Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեան եւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Սարկաւագաց դասը լեցուցած էր խորանը եւ կարմիր շապիկները աւելի եւս ճոխացուցած ու հարստացուցած էին զատկական մթնոլորտը:



Զատկի առթիւ իր գօտեպնդող քարոզին մէջ Սրբազան հայրը բացատրեց թէ ինչո՞ւ այսօր, Յարութեան օրը, մեր հոգիները ոգեւորուած են: Ան Սուրբ-գրային օրինակներով բացատրեց որ Քրիստոսի Յարութիւնը Քրիստոնէութեան աւանդին ստեղծումն է եւ Քրիստոնէութեան որպէս խորհուրդ հաստատումը: Սրբազանը հարազատօրէն բացատրեց թէ Քրիստոսի աշակերտները ինչպիսի հոգեփոխութիւն ապրեցան յարութենէն ետք 40 օրերու ընթացքին եւ ինչպէս կարողացան տարածել քրիստոնէական հաւատքն ու աւանդը աշխարհի մէջ, ի միջի այլոց Հայաստանի մէջ: Թուելէ ետք այն երկրամասերը, որոնք Քրիստոնէայ շրջաններ էին բիզանդական կայսրութենէն սկսեալ մինչեւ հիւսիսային Ափրիկէ եւ Մերձաւոր Արեւելք, եւ որոնք այսօր դարձած են մահմետական, ան հարց տուաւ



թէ ինչո՞ւ Հայութիւնը կարողացած է գոյատեւել որպէս Քրիստոնէայ հակառակ այն իրողութեան որ ան դարեր շարունակ տեսած է Գողգոթաներուն գողգոթաները, մինչեւ օրս: Որովհետեւ Հայը չէ կորսնցուցած իր Քրիստոնէայի յոյսը եւ կառչելով իր հաւատքին կարողացած է մնալ ու ապրիլ: Առ այդ, Սրբազանը թելադրեց Հայ ծնողներուն քրիստոնէական հաւատքով սպառազինել իրենց զաւակները: «Պայքարիլը պէտք է ըլլայ մեր առաքելութիւնը, որովհետեւ Քրիստոնէութիւն կը նշանակէ պայքարիլ մինչեւ յաղթանակ, կը նշանակէ կեանք եւ յաւիտենականութիւն, կը նշանակէ յոյս եւ դժուարութեանց տեղի չտալ»: Հետեւաբար մեր առաքելութիւնն է ապրիլ Քրիստոնէութիւնը ամէն օր եւ ամէն ժամ: Մեր զաւակները երբ կը դաստիարակենք առանց հաւատքի, մենք գիտակցաբար խաւարի թեկնածուներ կը պատրաստենք, իսկ Քրիստոնէայ հաւատքը լոյսի

յաղթանակն է խաւարին վրայ, հաստատեց Սրբազանը:

Անդրադառնալով մեր պարտաւորութեանց, Սրբազան Հայրը շեշտեց Աստուծոյ նկատմամբ մեր երախտագիտութեան կարեւորութիւնը եւ մեջբերում ընելով Պատարագէն «Եւ զՔոյդ ի Քոյոց Քեզ մատուցանեն»ը ան պատգամեց թէ մեր իւրաքանչիւրին պարտականութիւնն է Աստուծոյ մեզի տուածներէն մաս մը Իրեն վերադարձնելը:

Որպէս Քրիստոնէայ, հայութենէն դուրս ալ պարտականութիւններ ունինք իրարու նկատմամբ, որովհետեւ բոլոր Քրիստոնէաներուն պարտաւորութիւնն է պահել այս աշխարհի յաւիտենականութիւնը մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը:

Ինչ կը վերաբերի Հայ ժողովուրդին, Սրբազան հայրը ըսաւ. «մենք տակաւին յոյսը ունինք որ Աստուած մեզի իմաստութիւնը պիտի պարգեւէ մէկ բռունցք ըլլալու: Առանց ընդհանուր յայտարար ունենալու չենք

կրնար մեր մարտահրաւերները յաղթահարել: Որպէս ազգ եւ ժողովուրդ կ'ապրի՛նք բայց պիտի գիտնանք թէ ուր կ'երթանք, պիտի գիտնանք ինչպէս պահել մեր ազգային ժառանգութիւնը եւ ինչպէս միասին յառաջ երթալ: Համեստութիւնը, խոնարհութիւնը եւ քրիստոնէական ապրելաձեւը մեզ կը պահեն ամուր, միասնական եւ սիրով: Ազգովին յարութիւն առնենք մեր աստուածատուր տաղանդները գործածելով եւ զանոնք համադրելով, զանոնք օգտագործելով բարիին եւ արդարութեան համար եւ այդպիսով կրնանք յառաջանալ դէպի պայծառ ապագայ» եզրափակեց Սրբազանը:



Բ2., 10 Ապրիլ – Մեռելոց Յիշատակի օրուան առիթով, ընկերակցութեամբ Արժանապատիւ Քահանայ հայրերու՝ Նորայր Աւագ Քահանայ Բարսեղեանի, Պարթեւ Աւագ Քահանայ Գարագաշեանի եւ Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Սրբազան հայրը հանդիսապետեց ընդհանուր հոգեհանգստեան

պաշտօնին, որ տեղի ունեցաւ Մաքուարի Փարքի գերեզմանատան հայկական բաժնի Ցեղասպանութեան նահատակաց յուշարձանին առջեւ, ներկայութեամբ 60-ի հասնող հաւատացեալներու: Յընթացք արարողութեան Սրբազան հայրը տուաւ հակիրճ պատգամ ըսելով. «Այսօր եկած ենք յարգելու մեր հարազատները, որոնք իրենց հանգիստը գտած են: Մենք զանոնք կը դասենք յաղթական եկեղեցւոյ շարքին: Եկած ենք նորոգելու մեր ուխտը եւ իրենց ըսելու որ անոնք մեզի համար չեն մեռած այլ կ'ապրին եւ իրենց սկսած գործը մենք պիտի շարունակենք»: Ապա հոգեւոր հայրերը օրհնեցին գերեզմանները նախկին Առաջնորդ Ադան Արքեպիսկոպոս Պալիօզեանի, Արամայիս Քահանայ Սիրգայեանի, Ռազմիկ Վարդապետ Պօղոսեանի եւ սարկաւազներ՝ Յակոբ Շահինեանի, Գեորգ Ճանոյեանի, Յովհաննէս Խարաճեանի եւ Նուպար Եանկոյեանի:



Ուրբ., 14 Ապրիլ – Սրբազան հայրը մեկնեցաւ Նոր Զելանտայի Օքլանտ քաղաքը, 15 Ապրիլին մատուցելու համար Զատկական Պատարագ Օքլանտի փոքր գաղութին հաւատացեալներուն համար: Մանրամասնութիւններու մասին կարդայ «Լուրեր Նոր Զելանտայէն» բաժինին մէջ:

Կիր., 16 Ապրիլ – Առաւօտուն, Սրբազան հայրը վերադարձաւ Օքլանտէն եւ կէսօրէ ետք նախագահեց Սուրբ Յարութին Եկեղեցւոյ Ծխական Ընդհանուր ժողովին: Ժողովը զբաղեցաւ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդի 2022-ի տեղեկագրի քննարկումով, որոնք ներկայացուցան յաջորդաբար Տէր Աւետիս Քահանայի եւ Տիկին Արփի Սուրատեանի կողմէ: Հաշուական տեղեկագիրը եւ 2023-ի Նախահաշիւը ներկայացուց Տիկին Լորա Արթինեան: Պատասխանուեցան ուղղուած բոլոր հարցումներուն:

Տեղի ունեցաւ նոր ծխական խորհուրդի ընտրութիւն: Անուանացանկը՝ ստորեւ:

- Պրն Զաւէն Եաղլճեան՝ Ատենապետ
- Պրն Պետրոս Զօրլու՝ Փոխատենապետ
- Պրն Աբիկ Կեօզուգարայեան՝ հայերէն լեզուի Ատենադպիր
- Տիկին Ալիս Պաքլա՝ անգլերէն լեզուի Ատենադպիր

- Պրն Արա Գօփուշեան՝ Գանձապահ
- Պրն Յարութ Օքճեան՝ Փոխգանձապահ
- Պրն Գեղամ Անուշեան՝ Խորհրդական
- Պրն Հերման Մահմուր՝ Խորհրդական
- Պրն Վազգէն Ամիրգայեան՝ Խորհրդական
- Պրն Վրէժ Քիւրիւմլեան՝ Խորհրդական
- Պրն Միհրան Քէշիշեան՝ Խորհրդական



Իր փակման խօսքին մէջ Սրբազան հայրը գնահատեց ծխական խորհուրդի անդամներուն, այժմու թէ շրջանաւարտ, նուիրեալ աշխատանքի ոգին: Ան խորհրդածեց միասնական աշխատանքին մասին եւ հաւատացեալներու եկեղեցական աշխատանքներուն մասնակից դարձնելու կարեւորութեան վրայ: Այս առիթով Փարոսի խմբագրութիւնը կը շնորհաւորէ նորընտիր ծխական կազմը եւ կը մատթել յաջողութիւն անոր եկեղեցանուէր գործունէութեան:



ԲԶ., 17 Ապրիլ - Սրբազան հայրը նախագահեց Հայ Համայնքի Բարեկեցութեան Կեդրոնի Խնամակալ Մարմնի հերթական ժողովին, որ զբաղեցաւ Կեդրոնին համար պետական նոր վարկերու քննարկման աշխատանքով:

ԳԶ., 18 Ապրիլ – Սրբազան հայրը նախագահեց Թեմական խորհուրդի հերթական ժողովին, որը վաւերացուց 20 Մայիս 2023-ի Թեմական Պատգամաւորական Ժողովին ներկայացուելիք նիւթաբարոյական տեղեկագիրները: Ժողովը նաեւ վաւերացուց Սուրբ Երրորդութիւն եւ Սուրբ Յարութիւն Եկեղեցիներու նորընտիր ծխական խորհուրդները: Ժողովը վերջին մանրամասնութիւնները քննեց 6 Մայիսին տեղի ունենալիք Քոթթելիին, ի պատիւ «Առաջնորդարանի Բարեկամներ»ուն, նախկին եւ թեկնածու: «Առաջնորդարանի Բարեկամներ» ծրագիրը կը միտի անդամագրելու բոլոր անոնք որոնք նիւթապէս զօրաւիզ կը կանգնին Առաջնորդարանին, տարեկան կանխաւ որոշուած գումար մը յատկացնելով Առաջնորդարանին, որպէսզի ան կարողանայ փակել իր ծախսերը:

Հինգշաբթի, 20 Ապրիլ – Տեղի ունեցաւ յուղարկաւորութեան արարողութիւնը Տիկին Սոնիա Խանճեանին Հայ Առաքելական Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան հօր՝ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանի, ընկերակցութեամբ քահանայ հայրերուն: Հանգուցեալ Տիկին Սոնիան եւ ամուսինը՝ Պրն Լորիս Խանճեան եղան գլխաւոր բարերարները Առաջնորդարանի կառուցման: Այսու կը յայտնենք մեր երախտագիտական անկեղծ զգացումները Խանճեան ամուլին նուիրեալ գործունէութեան եւ անսակարկ զօրակցութեան համար: Տէր եւ Տիկին Լորիս եւ Սոնիա Խանճեան օրինակ պիտի ծառայեն ապագայ սերունդներուն իրենց ունեցած տեսլականով եւ ազգային ու հոգեւոր արժէքներու նկատմամբ իրենց ցուցաբերած հասկացողութեամբ:



Այս տխուր առիթով, Առաջնորդ Սրբազան Հայրը, Թեմական Խորհուրդը եւ Եկեղեցական ընտանիքը իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն Պրն Լորիս Խանճեանին, անոր զաւակներուն եւ թոռներուն եւ կ'աղօթեն առ Բարձրեալն որ Տիկին Սոնիայի յիշատակը անմար պահէ բոլորիս սրտերուն մէջ:



Ուրբ., 21 Ապրիլ – Ընկերակցութեամբ ՄԴՀԿ Աւստրալիոյ Վարիչ Մարմնի անդամներ Տիարք Սեպուհ Գալիաքեանի, Գեորգ Պետրոսեանի, ՌԱԿ Աւստրալիոյ Վարիչ մարմնի անդամներ Տիարք Հայկ Լեփեճեանի, Վահէ Արթիւնեանի եւ Տիկին Վարդուհի Լեփեճեանի, ՀԲԸՄ Սիտնիի Վարչութեան անդամներ Տիարք Սիհրան Լեփեճեանի, Յովհաննէս Գոյումճեանի, Հայաստանի նախկին վարչապետ եւ Հանրապետութիւն կուսակցութեան նախագահ Տիար Արամ Սարգիսեան եւ հայրենի վաստակաւոր լրագրող Տիար Նուէր Մնացականեան այցելեցին Առաջնորդարան, ուր զիրենք ընդունեցին Սրբազան Հայրը, Տէր Աւետիս քահանայ հայրը, Տիարք Սարգիս Տէր Պետրոսեան, Ստեփան Գրգեաշարեան, Պետրոս Զօրլու եւ Դիւանապետ Նշան Պասմաճեան:

Սրբազան հօր բարի գալուստի խօսքէն եւ հիւրընկալները ներկայացնելէն ետք, ան բացատրեց որ

Սրբազան հոր բարի գալուստի խօսքն եւ հիւրընկալները ներկայացնելն ետք, ան բացատրեց որ ինչպէս Սփիւռքի որեւէ համայնք, Աւստրալահայ համայնքն ալ իր եկեղեցիով եւ կազմակերպութիւններով իր կարելին կ'ընէ պահելու հայ դիմագիծ եւ հայ ինքնութիւն միշտ փորձելով պորտալարը հաստատ պահել Հայաստանի հետ, ուրկէ Սփիւռքի որեւէ գաղութ կը ստանայ իր աւիշը: Անդրադառնալով հայութեան ընդհանուր իրավիճակին, Սրբազանը ըսաւ որ քիչ մը շժմած է Հայ ժողովուրդը մանաւանդ 44-օրեայ պատերազմի պարտութենէն ետք, միւս կողմէ մեծ պետութիւնները իրենց շահերէն մղուած կը խառնուին Հայաստանի գործերուն, որով մեր գոյութիւնը վտանգի տակ կը պահեն եւ կարծէք նախաեղեռնեան շրջան մը կ'անցընենք:

Պարոն Սարգիսեան բնական երեւոյթ համարեց մեծ պետութիւններու փոքր պետութեանց գործերուն միջամտիւ ըլլալու հանգամանքը, սակայն ստեղծուած իրավիճակէն օգտուելու համար դիւրով որոշումներ պէտք է առնուին յօգուտ Հայաստանի: Ան իր լաւատեսութիւնը յայտնեց որ լայնամաշտապ պատերազմ չի կրնար ըլլալ Հայաստանի դէմ նկատի առնելով մեծ պետութիւններու շահագրգռածութիւնը:

Ինչ կը վերաբերի Սփիւռքին, Պրն Սարգիսեան յայտնեց իր տեսակէտը որ խիստ կարեւոր է Սփիւռքի նախարարութիւն ունենալը, ոչ թէ Սփիւռքի վարչութիւն, որովհետեւ Սփիւռքի մէջ 7 միլիոն հայութիւն կ'ապրի: Մեր սփիւռքեան ներուժը պէտք չէ բացթողել, սակայն նախ պէտք է անկախ Հայաստան ունենալ այդ ներուժը օգտագործելու համար: Միւս կողմէ Պրն Մնացականեան հաստատեց որ այն ինչ որ Հայաստանի մէջ կը քննարկուի նաեւ սփիւռքի համար է: Անդրադառնալով Հայ-թրքական յարաբերութեանց, ան ըսաւ որ հայ-թրքական յարաբերութիւնները բազմաշերտ են, իսկ Հայաստանի որեւէ կառավարութիւն կրնայ միայն Հայաստան-Թուրքիա յարաբերութեանց մասին քայլեր առնել:



Պրն Ստեփան Գրգեաշարեան հաստատեց որ Սփիւռքը այսօր անտեսուած է, այն ինչ որ պէտք էր տրուէր երբեմնի Սփիւռքի Նախարարութեան չտրուեցաւ: Սրբազան հայրը մատնանշեց որ 30 տարի եւ մինչեւ օրս Սփիւռքի ներուժը չէ օգտագործուած, որուն Պրն Սարգիսեան յայտնեց իր համամտութիւնը:

«Հայաստանը այս իրավիճակէն դուրս բերելու համար նուիրեալներու պէտք ունի երկիրը: Նաեւ միասնականութեան հարց ունինք որ պէտք է շտապ լուծել» խորհրդածեց Պրն Սարգիսեան: Ան իր անկեղծ քննադատութիւններէրը կատարեց այսօրուան կառավարութեան առնչութեամբ, ինչպէս դատական համակարգի կաղալը, դատաւորներու պակասը եւլն, նաեւ տուաւ գնահատականներ կարգ մը աշխատանքներու, որոնք իրականացան այս իշխանութեանց օրով, անոնցմէ մին է առանց կաշառքի պետական պաշտօններ ունենալը եւ ծառայելը հայ պետութեան, ո՛չ օտար պետութեանց: Ան բարձր գնահատեց եկեղեցւոյ եւ գոյգ կաթողիկոսութեանց դերը յօգուտ Հայաստանի:

Ուրբ., 21 Մարտի – Հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ Սրբազան հոր եւ կազմակերպութեամբ Աւստրալիոյ ՄԴՀԿ-ի, ՌԱԿ-ի եւ ՀԲԸՄ-ի վարչութեանց, տեղի ունեցաւ Յեղասպանութեան 108-ամեակի ոգեկոչում Ռայտի Սէնթ Անն Անկլիքան եկեղեցւոյ մէջ «Հայոց Յեղասպանութեան 108-ամեակ. Հայաստան եւ Արցախ մարտահրաւերներու ընդառաջ» ընդհանուր խորագրի տակ: Ներկայ էին Արժանապատիւ հոգեւոր քահանայ հայրեր, վերապատուելիներ, թեմական, քաղաքական անձնաւորութիւններ եւ նահանգային երեսփոխաններ: Մէկ վայրկեան յոտնկայս լռութենէ ետք ի

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցությունը բերին սիրուած երգչուհի Մաշա Մնջոյեան (Հայ Զինուոր, Ապրելու Ապրիլ եւ Երազ Իմ Երկիր Հայրենի), Իմիճին Փինուիսեթ (դաշնամուր, Փրէլիտ Է. Պաղտասարեան), Նանար Մարաշլեան ասմունքեց Պ. Մեւակի «Ընկաճները», Քաթալինա Տերմէնճեան (Թաւ ջութակ՝ Կռունկ, Կոմիտաս): Խօսք առաւ Բայտի նորընտիր խորհրդարանի անդամ Ճորտըն Լէյն: Ալեքսանտր Վարժարանի տնօրէն Պրն. Մանուկ Տէմիրճեան փոխանցեց կազմակերպիչ մարմնի խօսքը որմէ ետք բեմ հրաւիրեց «Հանրապետութիւն» կուսակցութեան հիմնադիր նախագահ եւ նախկին վարչապետ Պրն Արամ Մարգիսեանը, որ հրաւիրուած էր Միտնի այս առիթով: Պրն Մարգիսեան անդրադարձաւ Հայաստանի առջեւ ծառայած եւ ծառայող մարտահրաւերներուն, զանոնք յաղթահարելու միջոցներուն եւ որդեգրուած պետական սկզբունքներուն: Ան կոչ ուղղեց միասնականութեան եւ հաւաստիացուց որ Հայաստան հնարաւորութիւններ ունի դարձեալ յաղթելու իր թշնամին:



Իր փակման խօսքին մէջ Սրբազան հայրը իրատեսութեան հրաւիրեց ներկաները ըսելով թէ ոչ ոք պիտի օգնէր Հայուն բացի Հայ ժողովուրդէն եւ թէ միայն Հայ ժողովուրդն էր որ իր միասնական պայքարով եւ աշխատանքով կրնայ տիրանալ իր բռնաբարուած իրաւունքներուն: Օտարի վրայ յոյս դնելէ առաջ Հայ ժողովուրդը ինքն իր վրայ պիտի դնէ իր յոյսը: «Մեր պատմական հողերուն ճամբան կ'անցնի միայն ու միայն ներկայ Հայաստանով ու Արցախով» պատգամեց Սրբազանը: Ան քննադատեց այն անտարբերութիւնը որ այսօր առկայ է Հայրենիքը, Արցախը



պաշտպանելու համար: Պէտք է կարենալ սորվիլ եւ ճշդել բոլոր այն սխալները որ անցեալին կատարած ենք եւ պիտի «վերականգնենք Արցախը Մերն է պահանջատիրական ոգին» եզրափակեց Սրբազան Հայրը:

Շբ., 22 Ապրիլ – ՄԴՀԿ-ի, ՌԱԿ-ի եւ ՀԲԸՄ-ի վարչութեանց կողմէ կազմակերպուած հարց-պատասխան Պարոն Արամ Մարգիսեանի հետ հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանին: Երբեմն մթնոլորտը ելեկտրանացաւ: Աւարտին, Սրբազան հայրը յորդորեց իրարու հասկացողութիւն ցոյց տալ եւ յարգել իրարու կարծիքը առանց վիրաւորանքներու:

Կիր., 23 Ապրիլ – Մօտ հազար ցուցարարներ Հայոց Փարքէն, առաջնորդութեամբ ՀՄԸՄ-ի սկաւուտներուն եւ փողերախումբին, քաղցին մինչեւ Սըրքիւլըր Քի եւ դրօշներ պարգաճ իրենց ցատուը յայտնեցին եւ արդարութիւն պահանջեցին 108 տարի առաջ պատահած Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ի խնդիր: Ցուցարարները իրենց բարկութիւնը արտայայտեցին պաստառներով, արտասանուած լրզունգներով, պահանջելով Աւստրալիոյ դաշնակցային կառավարութենէն ճանաչումը Հայոց Ցեղասպանութեան: Սրբազան հայրը ներկայացուց Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Ցուցարարներու խումբին մէջ էին նաեւ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեան եւ Վերապատուելի Գրիգոր Եումուշաքեան: Պահանջատիրութեան խօսք արտասանեց Հայ Դատի Յանձնախումբի Գործադիր Տնօրէն Մայքըլ Գոլոգոսեան որ իր կարգին պահանջեց արդարութիւն, ճանաչում եւ հատուցում Հայ, Յոյն եւ Ասորի ցեղասպանութեանց:

Հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներուն կողքին ներկայ էին նաեւ ներկայացուցիչներ Յոյն եւ Ասորի պահանջատիրական կազմակերպութիւններէն: Յոյցը աւարտեցաւ Վերապատուելի Եումուշաք-եանի (անգլերէն) եւ Տէր Աւետիս քահանայ հօր (Հայերէն) աղօթքներով:

Բշ., 24 Ապրիլ – Ինչպէս ամէն տարի, Յեղասպանութեան հարիւրամեակէն ետք ամէն Ապրիլ 24-ին, Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ մէջ կը մատուցուի Պատարագ ի յիշատակ մէկուկէ միլիոն նահատակներուն: Սրբազան հայրը պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց: Պատարագին ներկայ էին Ուիլուպիի նահանգային ներկայացուցիչ Թիմ Ճէյմս, Ուիլուպիի քաղաքապետ Տիմոթի Թանիա Թէյլըր, Բայտի քաղաքապետ Պրն Սարգիս Ետէլեան, նախկին վարչապետ Պրն Արամ Մարգիսեան, Հեռատեսիլի լրագրող Պրն Նուէր Մնացականեան, թեմական, քաղաքական, մշակութային, բարեսիրական, կրթական, մարզական հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ հարիւրեակ մը հաւատացեալներ, որոնք եկած էին անգամ մը եւս իրենց ուխտը վերանորոգելու եւ իրենց յարգանքը մատուցելու Ապրիլեան Եղեռնի նահատակ սուրբերուն յիշատակին: Յաւարտ Պատարագին, Սրբազան հօր եւ Սիտնիի չորս հոգեւոր հայրերուն առաջնորդութեամբ, առաջնորդութեամբ ՀՄԸՄ-ի սկաւտներուն, տեղի ունեցաւ քայլերթ դէպի Պօշան



Փարքի խաչքարը, որ գետեղուած էր 2015 թուականին: Հանդիսավար Նշան Մարկարազ Պատմաճեան մէկ վայրկեան յօտնկայս լուրթեան հրաւիրեց ներկաները ի յարգանք մեր նահատակներուն, ապա Խաչքարին առջեւ նախ գետեղուեցան ծաղկեպսակներ: Խօսք տրուեցաւ Տիմոթի Թանիա Թէյլըրին, Սարգիս Ետէլեանին եւ Տիմոթի Թանիա Թէյլըրին, որոնք անդրադառնալէ ետք 20րդ դարու սկիզբը տեղի ունեցած ահաւոր նախաճիրին, պահանջեցին Աւստրալիոյ կառավարութենէն եւ վարչապետ Անթոնի Ալպանիզիէն ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը ի՛ր անունով, այսինքն՝ «**Յեղասպանութիւն**»: Նոյնը պահանջուեցաւ նաեւ դաշնակցային կառավարութեան ընդդիմադրութեան ղեկավար Փիթըր Տաթընէն: Դժբախտաբար սակայն երկու ղեկավարները կրկնեցին այն ինչ որ զիրենք նախորդողները անուանած էին ցեղասպանութիւնը, տուրք տալով թուրք եւ ազերի տարբեր ճնշումներուն: Երեք խօսք առնող քաղաքագետները նաեւ պահանջեցին որ Աւստրալական կառավարութիւնը անյապաղ ճնշում բանեցնէ Բերձոր-Լաչինի անցքի շրջափակման վերացման ի նպաստ:

Ապա Սրբազան հայրը, չորս քահանայ հայրերուն հետ միասին, կատարեց Խաչքարին օրհնութիւնը: Անոնք աղօթք բարձրացուցին որ մեր նահատակ սուրբերուն յիշատակը վառ մնայ իւրաքանչիւր հայու սրտին մէջ:

Ք2., 24 Ապրիլ – Յեղասպանութեան յիշատակման միացեալ մարմնին կազմակերպած ոգեկոչման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Չացուտի Քոնքորս հանդիսասրահին մէջ, մասնակցութեամբ աւելի քան 500 ներկաներու, որոնց կարգին աւելի քան քսան քաղաքական եւ պետական անձնաւորութիւններ: Հանդիսավարներ Արշօ Ապեճեան եւ Սերլի Պեօճիքեան: Աւստրալիոյ, Հայաստանի եւ Արցախի քայլերգներէն ետք տեղաբնիկներու



Ումիթ Քուրթ: Ծագումով Քիւրտ, ծնեալ Այնթապ, քաղաքական հոյակապ պատրաստութեան տէր այս մտաւորականը վերլուծեց թէ ինչ են տնտեսական պատճառները, որոնց համա՞ր նաեւ Թուրքիան չի ճանչնար Հայոց Յեղասպանութիւնը: Դոկտ Քուրթի դասախօսութիւնը նոր լոյս սփռեց ցեղասպանագիտութեան եւ Հայոց պարագային ցեղասպանական արարքին եւ անոր պատճառներուն վրայ: Ապա տասնեակ մը քաղաքագետներ իրենց քաղաքական ուղերձը կարդացին եւ իրենց պահանջատիրական կեցուածքը արտայայտեցին Յեղասպանութեան ինչպէս նաեւ Արցախի շրջափակման վերացման եւ Արցախի ինքնորոշման իրաւունքին ի նպաստ: Ցուցադրուեցաւ տեսաերիզ, խորհրդարանի անդամներու յայտարարութիւններուն վերաբերեալ, ուր անոնք դատապարտման ալիք բարձրացուցին բոլոր անոնց դէմ որոնք չեն ճանչնար Հայոց ցեղասպանութիւնը:

Փակման խօսքը կատարեց Բարձր. Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեան, որ գնահատեց ոգեկոչման երեկոյի կազմակերպիչները, հանդիսութեան քաղաքականօրէն բարձր որակին համար: Ան դրուատանքով արտայայտուեցաւ Դոկտ Ումիթ Քուրթի արծարծած կարեւոր նիւթին: Ան

րնիկներու արդար իրաւունքներուն բռնաբարման: Գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Ճոնաթան Ամիրգայեան, որ Կիթարի ընկերակցութեամբ երգեց «Տուն իմ հայրենի»ն, ասմունքող Զանի Օքճեան արտասանեց Միամանթոյի «Դարերու Վրէժ»ը, իսկ Սիտնի Պարի Անսամպլը պարեց «Մշոյ Կորանի»ն եւ «Սղերթի Քոչարի»ն: Մայքըլ Գոլոգոսեան, գործադիր տնօրէն Աւստրալիոյ Հայ Դատի Յանձնախումբին, արտասանեց ջատագովական իր ուղերձը լաւագոյնս պատճառաբանելով հայութեան արդար պահանջքը: Գլխաւոր բանախօսն էր Աւստրալիոյ Նիւ Քասըլ քաղաքի համալսարանի քաղաքական գիտութեանց դասախօս Դոկտ





նաեւ գովեստով արտայայտուեցաւ կազմակերպիչներուն նկատմամբ ոչ Հայ մտաւորական մը գլխաւոր բանախօս հրաւիրելուն համար: Այստեղ արժէ յայտնել, որ Դոկտ Ումիթ կը տիրապետէ նաեւ հայերէնին, զոր տրված է Երեւանի մէջ յատուկ դասընթացքի հետեւելով: «Ես կ'ուզեմ ձեռքը սեղմել որեւէ Թուրքի եւ որպէս մարդ յարաբերիլ սակայն Թուրք պետութիւնը պատուար կը դնէ մեր միջեւ չճանչնալով Յեղասպանութիւնը, չընդունելով իր սխալը: Ումիթ Քուրթի դասախօսութիւնը խիստ կարեւոր է, որովհետեւ ան մեզի կ'ըսէ թէ ինչ են պատճառները որ Թուրքիա չընդունիր իր ցեղասպան ըլլալը, որովհետեւ ան պէտք է հատուցէ եւ ետ տայ այն հողը որուն վրայ ան կանգնած է այսօր»: Սրբազանը շարունակելով ըսաւ թէ ջարդը տակաւին չէ աւարտած նաեւ ազատութեան մեր պայքարը չէ վերջացած: Ան պահանջեց ներկաներէն ուխտել չմոռնալ մեզի պատահած անարդարութիւնը եւ պայքարը շարունակել միասնական ոգիով, սիրտ սրտի եւ ձեռք ձեռքի: Հանդիսութիւնը փակուեցաւ Սրբազան հօր Պահպանիչով:

Դժ., 26 Ապրիլ – Կազմակերպութեամբ Առաջնորդարանին եւ 50-ի շուրջ մասնակիցներով տեղի ունեցաւ առցանց դասախօսութիւն, նիւթ՝

«Ասորի Ուղղափառ Եկեղեցոյ Նախնական Հակազդեցութիւնն ու Արձագանգումը Հայոց Դէմ Տեղի Ունեցած Համիտեան Չարդերուն»

Գլխաւոր բանախօս՝





Ասորագէտ պատմաբան եւ նպաստընկալ Գրգեաշարեան-Գայիքեան ֆոնտի Դոկտ Սայմըն Պըրք, ընկերակցութեամբ՝

Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք. Նաճարեանի, նիւթ՝

1895-1896 Համիտեան Չարդերը – Պատմական Վերլուծում

Նաեւ՝ Փոխատենապետ Թեմական Խորհուրդին եւ հիմնադիր «Գրգեաշարեան-Գայիքեան ֆոնտ»ին՝ Պրն Ստեփան Գրգեաշարեան, նիւթ՝

Միտնի Համալսարանի «Գրգեաշարեան-Գայիքեան ֆոնտ»ը Յատկացուած Հայկական Նիւթերու Ակադեմական Ուսումնասիրութեանց



Դոկտ Պրքք ներկայացուց երկու ասորական փաստաթուղթեր, ուր ասորական եկեղեցին Համիտեան Ջարդերու պատասխանատուութիւնը կը դնէ Հայ ժողովուրդին վրայ, յատկապէս անոր ինքնապաշտպանման համար գործող յեղափոխական կազմակերպութեանց: Հետագոտութիւնը ի յայտ բերած է թէ Օսմանեան բռնակալութեան ներքեւ, մորթ ազատելու համար, ինչպէս քոյր եկեղեցիի մը գլխաւոր եկեղեցապետը կը մեղադրէր Համիտեան Ջարդերուն 200-300 հազար զոհ տուող Հայ համայնքը, առանց իմանալու որ տասնամեակ մը ետք Ասորի համայնքն ալ պիտի ենթարկուէր նոյն ճակատագրին: Սրբազան հայրը վերլուծումը կատարեց Համիտեան ջարդերուն այսպիսով պատմական ժամանակագրութիւն մը ներկայացնելով եւ քաղաքական դրդապատճառներ մատնանշելով:

Պրն Ստեփան Գրգեաշարեան ներկայացուց Գրգեաշարեան-Գայիքեան ֆոնտը Սիտնի Համալսարանին մէջ, որ տրամադրուած է հայկական նիւթերու ուսումնասիրութեան մինչեւ 1900 թուական: Ֆոնտին կրնան դիմել բոլոր անոնք որոնք կը փափաքին իրենց մագիստրոսական կամ դոկտորական թէգերը պատրաստել եւ վկայուիլ որպէս Մագիստրոս կամ Դոկտոր: Պրն Գրգեաշարեանէն տեղեկացանք որ ցարդ մեծ թիւով ակադեմականներ կան ուսանողներ օգտուած են ֆոնտէն, դժբախտաբար անոնց մէջ ոչ մէկ Հայ...

Հանդիսավար Նշան Պասմաճեան, իւրաքանչիւր դասախօսութենէ առաջ ներկայացուց տուեալ բանախօսը իսկ դասախօսութեանց աւարտին առիթ տուաւ հարցումներու, որոնց պատասխանեցին 3 դասախօսները:

Դոկտ Պրքք իր երախտագիտութիւնը յայտնեց Գրգեաշարեան-Գայիքեան ֆոնտին ի դէմս Պրն Գրգեաշարեանին եւ այս ձեռնարկը կազմակերպիչներուն ու իրեն տրուած առիթին, որ իրեն համար մեծ քաջալերանք էր իր ասպարէզին առնչութեամբ:

Սրբազան հօր գնահատանքի խօսքով եւ աղօթքով փակուեցաւ խիստ հետաքրքրական դասախօսական ձեռնարկը:

Շբ., 29 Ապրիլ – Ընդառաջելով Բայտի քաղաքապետ Պարոն Սարգիս Ետէլեանի հրաւերին, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանի եւ Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի մասնակցեցաւ Բայտի քաղաքապետարանի կազմակերպած Հայոց Ցեղասպանութեան 108րդ տարեդարձին առիթով կազմակերպած յուշատօնին Meadowbank Memorial Park-ի խաչքարին մօտ: Ներկայ էին Հայ եւ ոչ Հայ քաղաքական այրեր: Ի միջի այլոց խօսք առին Պենըլոնկի դաշնակցային խորհրդարանի ներկայացուցիչ ժերօմ Լաքսալ, նորընտիր Պենըլոնկի նահանգային ներկայացուցիչ Ճորտըն Լէյն եւ այլք: Բոլոր խօսք առնող քաղաքական անձերը հրաւիրեցին Թուրքիան եւ Աւստրալիան ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը եւ արդար լուծում պահանջեցին Հայ դատին: Տեղի ունեցաւ ծաղկեպսակներու զետեղում ներկայ հայկական համարեա բոլոր կազմակերպութեանց ներկայացուցիչներուն ինչպէս նաեւ պետական կառոյցներու ներկայացուցիչներուն կողմէ: ՀՄԸՄ-ի սկաուտական փողերախումբը քայլերգներով եւ ազգային նուագներով ելոյթ



ունեցաւ միջոցառման սկիզբին ու աւարտին: Սրբազան հայրն ու քահանայ հայրերը կատարեցին օրհնութիւնը Խաչքարին: Ապա Սրբազան հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց բոլոր պետական ներկայացուցիչներուն, որոնք արդարութեան դրօշը պարգած կը պահանջեն լուծում հայ դատին նաեւ դրական կեցուածք ունին Արցախի ինքնորոշման ի նպաստ:

Իր եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ քաղաքապետ Սարգիս Ետէլեան, որ իբրեւ Ցեղասպանութենէն վերապրող Հայոյ թոռ անձնական վկայութիւններ տուաւ եւ իր երախտագիտութիւնը յայտնեց բոլոր ներկաներուն, յատկապէս իր քաղաքական գործընկերներուն:

Հաւաքը փակուեցաւ Աւստրալիոյ եւ Հայաստանի քայլերգներով:

Կիր., 30 Ապրիլ – Արդէն աւանդութիւն դարձած է որ Համազգայինի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ, աւստրալարնակ Քեսապցիներ կազմակերպեն «Փրփուր Փառատօնը»: Այս ձեռնարկը մեծապէս կը քաջալերուի ոչ միայն Սրբազան հօր կողմէ այլ նաեւ քահանայ հայրերուն եւ Աւետարանական թէ Կաթողիկէ եկեղեցիներու հոգեւոր հովիւներուն կողմէ, չհաշուած համայնքի բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները: Այս փառատօնը խաղողի ռուպ պատրաստելու փառատօնն է, որ դարերէ ի վեր Քեսապի մէջ յատուկ արարողութիւններով կը կատարուի: Սա հաւաքական աշխատանքի մէկ օրինակն է, խորհրդանիշը Հայ գիւղացիին իր նմանին նեցուկ կանգնելուն: Քեսապցիներէ բաղկացած յատուկ յանձնախումբ մը կազմուած էր (աւելի քան 15 տիարք եւ տիկնայք) որոնք կազմակերպչական լման բեռը առած էին իրենց ուսերուն եւ որ զիրենք հասցուց յաջողութեան եւ մասնակիցներուն շնորհած գնահատական խօսքերուն եւ նուիրատուութեանց: Ձեռնարկի ընթացքին ծախուեցան Քեսապի յատուկ ուտեստեղէններ, վիճակահանութեան տոմսեր եւ Ռուպ: Սրբազան Հայրը յատուկ բռնեփով ըրաւ այն ինչ որ գիւղացիք հազարաւոր տարիներէ ի վեր ըրած են ռուպի փրփուր պատրաստելու համար: 250-է աւելի ներկաներ



համտեսեցին փրփուրը եւ գնեցին ռուպի շիշերը: Իրենց երգերով մթնոլորտը ճոխացուցին Չարլի Չէյ եւ Նիքոլ Պոյմուշաքեան ինչպէս նաեւ Քեսապի աւանդական պար բռնողները: Սրբազան հայրը, տակաւին կրակին վրայ, «Ամէն Ալէլուիա»ով օրհնեց արդէն իսկ հասած ռուպով լի տաշտերը, որոնք լեցուեցան ռուպով, պատրաստ՝ վաճառման: Մեծ էր խանդավառութիւնը Սրբազան հօր եւ ներկայ ժողովուրդին: Ձեռնարկէն գոյացած եկամուտը պիտի յատկացուի Քեսապի Ազգային Ուսումնասիրաց Ճեմարանին, որ Ցեղասպանութենէն ետք Սուրիոյ մէջ բացուած առաջին երկրորդական վարժարանն է եւ այսօր կը հաշուէ 250 աշակերտներ: Սրբազան հայրը օրհնեց բոլոր աշխատողները եւ հաւաքուած գիտակից եւ աւանդապահ ժողովուրդը եւ քաջալերեց կազմակերպիչները յաջորդ տարին աւելի մեծ մաշտապով կազմակերպել այս կարեւոր ձեռնարկը:




ՍՈՆԻԱ ԽԱՆՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դամբանական Խօսուած Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Մէջ

Սոնիա Խանճեան ծնած է Հէլիոփոլիս՝ Գահիրէ, 15 Դեկտեմբեր 1934-ին: Ան միակ զաւակն էր իր ծնողաց՝ Վահան եւ Սիւրանուշ Հանէսեանին: Նուպարեան Նախակրթարանը աւարտելէ ետք ծնողքը կը փոխադրուին Ֆրանսա եւ Սոնիա իր երկրորդական ուսումը կը ստանայ ֆրանսացի մայրապետներու մօտ Ֆրանսայի Նիս քաղաքին մէջ, որպէս գիշերօթիկ աշակերտուի:

1950-ին, ծնողքին հետ կը փոխադրուի Աւստրալիա: Հինգ տարի ետք Լորիս Խանճեան կը գաղթէ Աւստրալիա: Կը հանդիպին եւ կը դառնան կեանքի ընկեր:

21 Յունուար 1956-ին Լորիս եւ Սոնիա կ'ամուսնանան Անկլիքան Սուրբ Թովմաս Եկեղեցւոյ մէջ՝ Նորթ Սիտնի: Կը բախտաւորուին 3 մանչերով՝ Քէն, Վիքթոր, Ֆիլիփ եւ մէկ դուստրով՝ Մարիան: Անոնք բախտաւորուեցան նաեւ 9 թոռներով եւ 6 ծոռներով:



Սոնիայի ծնողները՝ Վահան եւ Սիւրանուշ Հանէսեան զօրաւոր հաւատացեալներ էին եւ գործուն Հայ Առաքելական Եկեղեցւոյ շրջապատէն ներս: Հայրը նուիրեալ վարչական անդամ մըն էր եւ առաջին խմբագիրը Լոյս տեղեկատուին, 1950-ական վաղ տարիներուն: Սոնիան, ներշնչուելով իր հօր նուիրումներէն, ուզեց ժառանգ մը թողուլ իր ետին, հետեւաբար Հանէսեան-Խանճեան սրահը կառուցուեցաւ մի քանի տարի առաջ Առաջնորդարանի շէնքին մէջ: Անոնք պարզեւտրուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանով՝ ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ:



Սոնիայի Քրիստոնէական հաւատքը եւ արժէքները զինք մղեցին ըլլալու առատաձեռն հայուի մը, որ մեծ արժէք կու տար բարեգործ աշխատանքին: Իր առատաձեռնութեան տուրք տալով, ան օգտակար դարձաւ շատ մը Հայ ընտանիքներու Հայաստանի մէջ, Երեւանի Կարմիր Խաչին միջոցաւ: Եւս առաւել, ան հիմնադիր անդամ է Սիտնիի Հայ Հանգստեան Տան Ընկերակցութեան, միասնաբար

համախոհ ընկերուիներու հետ: Ան խնամակալ մարմնի փոխնախագահութիւն ստանձնելէ ետք, Պրորփվէյի մէջ կառուցեց Ալեքսանտր հանգստեան տունը Հայ համայնքին համար:

Սոնիա շատ աշխատասէր եւ խոնարհ կին մըն էր, որ կը գնահատէր արժէքը ընտանիքին, ընկերներուն եւ համայնքին: Ան բացառիկ անհատականութեան տէր էր եւ առաջնորդող՝ իր գործակիցները:

Սոնիան լեցուած էր սիրով: Եղաւ միշտ գուրգուրոտ եւ զօրակից այն շրջանակին մէջ ուր գտնուեցաւ: Անմոռ եւ անմար պիտի մնայ իր յիշատակը, իսկ իր տեղը՝ միշտ դատարկ...

Լուրեր Ծուխերէն

Ուէնուրբթվիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Կիրակի, 2 Ապրիլ, Ծաղկագարդ, Արմաւենեաց Կիրակի: Արժ. Ս. Միւռն Բինյ. Աւետիսեան խումներամ հաւատացեալներու ներկայութեամբ, մեծ շուքով նշեց Քրիստոսի մուտքը Երուսաղէմ, մաղթելով որ ամենահամեստ այս տօնին խոնարհութիւնը վարակիչ

ըլլայ համայն ժողովուրդին եւ այդ ցնծութիւնը լիացնէ բոլորին կեանքը: Մանուկներու օր հոշակուած նաեւ այս տօնին, բոլոր մանուկները բարձրացան խորան, օրհնութիւն ստացան Քահանայ հօրմէն եւ ապա փուչիկներ բաժնուեցան բոլորին: Մանուկներու ուրախութիւնը անսահման էր: Նոյն օրը օրհնուեցան սպասներ՝ Խորանի վարագոյրներ եւ զգեստներ, նուիրատուութեամբ Տէր եւ Տիկին Բոստոմ եւ Սօսի Շահինեաններու, եկեղեցականաց աթոռներ՝ նուիրուած Տիկ. Արշօ Թահմիզեանի կողմէ, ոտնւուայի կաթսայ տիար Վագգէն Եկէնեանի եւ դպրաց մոմակալներ՝ Շուշիկ եւ Վարդուկ Մկրտչեաններու կողմէ: Վերջին արարողութիւնը Դոնբացէքն էր: Դոնբացէքի խորհրդաւոր թակոցներով փակուեցաւ սոյն օրուան Խորհուրդը: Արժանապատիւ Տէր Միւռն Լաւագոյն բարեմաղթութիւններ եւ արեւշատ օրեր մաղթեց մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն:



Աւագ Հինգշաբթի, 6 Ապրիլին, հաւատացեալներու



տաքուկ «Ոսպապուրը»: Ապա Խաւարման կարգով՝ վառուեցան 12 մոմերը, մէկը՝ սեւ գոյնի, որպէս Յուդայի խորհրդանիշ եւ մէկը մեծ խորանի կեդրոնը: Իւրաքանչիւր աւետարանի հատուածի ընթերցումէն ետք մարեցաւ մէկ մոմ եւ մնաց Յիսուսը մինակ լքուած: «Ուր ես Մայր իմ» ցնցող շարականով, հոգիները յուզումով լեցուած, հաւատացեալ ժողովուրդը

խումն ներկայութեամբ, Արժ. Ս. Միւռն Բինյ. Աւետիսեան նախ Յիսուս Քրիստոսի վերջին ընթրիքի յիշատակութիւնը կատարեց այսինքն Ս. Հաղորդութեան խորհուրդը, ապա անցաւ Ոտնւուայի այն խոնարհ արարողութեան, որ Յիսուս Քրոստոս կատարեց իր աշակերտներուն հետ եւ հետեւելով Անոր օրինակին, Քահանայ հայրը լուաց 12 Կիրակնօրեայ դպրոցի մանուկներու ոտքերը, ինչպէս նաեւ ուխտաւոր հաւատացեալ փոքրիկներու, որոնք բոլորը խոնարհութեան ոգիով լեցուած կը վայելէին Քրիստոսի ներկայութիւնը: Նախքան Հսկումի խաւարման կարգը, ներկայ բազմութիւնը՝ օրհնուած կարագները առնելէ ետք ուղղուեցան «Պաթմանեան» սրահ վայելելու Տիկնանց յանձնախումբի կողմէ մատուցուած Յիսուս Քրիստոսի մատնութեան խորհուրդով

Շաբաթ, 8 Ապրիլին Ճրագալոյցի Ս. Պատարագը մատուցեց Առաջնորդ Սրբազան հայրը: Սրբազան հայրը յաւոր պատշաճի քարոզեց եւ ոգեւորեց ներկաները Քրիստոսի Յարութեան խորհուրդով եւ Յարութեան կենսատու պատգամով: Ան յորդորեց ամուր կառչած մնալ մեր ազգային եւ հոգեւոր արժէքներուն ու սրբութիւններուն: Սրբազանը իր գնահատանքը կատարեց եւ գոհունակութիւնը յայտնեց ժողովրդային հոծ ներկայութեան առնչութեամբ:

Սրբազան Հայրը թափորով բարձրացաւ «Պաթմանեան» սրահ, ուր կատարեց ասանդական տնօրինէքի արարողութիւնը: Ապա, մասնակից դարձաւ իր հովանաւորութեամբ կազմակերպուած ժողովրդական «Խթման Ընթրիք»ին:



Կիրակի, 9 Ապրիլ Սուրբ Յարութիւն: «Չատիկ»-ի հանդիսաւոր արարողութիւնը կատարեց Արժ. Ս. Միւռն Քհնյ. Աւետիսեան. եկեղեցին իր հաւատացեալ բազմութեամբ կը գնձար Քրիստոսի հրաշափառ Յարութեամբ: Քահանայ Հայրը Ս. Պատարագէն ետք ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Չատկուան պատգամը, որ կը սկսէր շատ դիպուկ հարցով. «Երբ մարդու որդին գայ, արդե՞ք երկրի վրայ հաւատք կը գտնէ»: Ապա Տէր Միւռն փառաբանեց յարուցեալ փրկիչը՝ ասետելով Քրիստոս Յարեաւ ի մեռելոց... եւ օրհնաբանեց Տիրոջ Յարութիւնը: Աւարտին, հաւատացեալները Թափօրին հետ միասին բարձրացան «Պաթմանեան» սրահ, Տիկնանց պատրաստած ուտեստներով հիւրասիրուեցան եւ հաւկթախաղին մասնակից դարձան, օգտուեցան նաեւ Տիկնանցի վաճառքի սեղանէն եւ ներկայ բոլոր մանուկները զատկուայ ուտեստեղէնի պարկեր ստացան նուիրուած օրիորդ Նայիրի Սարգիսեանի կողմէ, պատրաստուած՝ Կիրակնօրեայ դպրոցի անունով:



Երկուշաբթի, 10 Ապրիլին Արժ. Ս. Միւռն քհնյ. Աւետիսեանը Յիշատակ Մեռելոցի եւ հոգեհանգստեան Պաշտօն կատարեց «Ըուքվուտի» գերեզմանատան մէջ: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:



Ուրբաթ, 14 Ապրիլի երեկոյեան «Պաթմանեան» սրահէն ներս տեղի ունեցաւ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ տարեկան ընդհանուր անդամական ժողովը Թեմական խորհուրդի անդամներու ներկայութեամբ եւ նախագահութեամբ Արժ. Ս. Միւռն Քհնյ. Աւետիսեանի: Ժողովը հեզասահ ընթացաւ եւ անդամագրուած ներկաներու արդար քուէարկութեամբ ընտրուեցաւ Օխական խորհուրդի նորակազմ մարմինը:

Կիրակի, 23 Ապրիլ Աշխարհամատուռ՝ Կանաչ Կիրակիի Պատարագի քարոզին Արժ. Ս. Միւռն Քհնյ. Աւետիսեան փոխանցեց ներկայ հաւատացեալ ժողովուրդին առաջին վերնատան եկեղեցիի հիմնադրումը, որ կոչուեցաւ նաեւ մատուռ, մարտիրոսանոց ի նշան նահատակ առաքեալներու արեան եւ աճիւններուն, որոնք տեղադրուեցան Գողգոթայի վրայ հիմնուած Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ: Կանաչ

կոչուեցաւ, որովհետեւ յաւերժական է, ինչպէս մեր Քրիստոսը, որ կ'առաջնորդէ մեր կեանքը դէպի յաւիտենականութիւն: Քրիստոս սրբավայել կեանք վարելու առաջնորդեց հաւատացեալները, վայելելու համար յաւիտենականութիւնը:

Կիրակի, 23 Ապրիլի կէսօրին, Ս.Դ.Ն.Կ-Ի Ղեկավարութիւնն ու Վարչութիւնները յարգեցին Յեղասպանութեան զոհերուն եւ նահատակ զինուորներուն յիշատակը: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Աւստրալիոյ Վարիչ Մարմինը «Մաքուարի Փարք» գերեզմանատան մէջ տեղադրուած Նահատակաց յուշարձանին շուրջ մէկտեղեց կուսակցութեան եւ յարակից կառոյցներուն՝ Նոր «Սերունդի Չայն» ռատիոժամի, «Նոր Սերունդ» ամսաթերթի, տիկնանց օժանդակ վարչութեան, Հայ Աւստրալական Խորհուրդի ղեկավարներն ու վարչական ընկեր-ընկերուհիները՝ յարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանութեան զոհերու եւ վերջին շրջանին հայրենիքի պաշտպանութեան համար իրենց կեանքը նուիրաբերած հայ զինուորներու յիշատակին:



Սուրբ Երրորդութիւն եկեղեցոյ հոգեւոր հովիւ Տէր Միւռոն Քահանայ

Աւետիսեան հոգեհանգստեան աղօթք մատուցեց յանուն նահատակներու յիշատակին, ապա յուշարձանին առջեւ ծաղկեպսակներ զետեղեցին Ս.Դ.Ն.Կ. Աւստրալիոյ շրջանի անունով՝ Վարիչ Մարմինի ատենապետ Պրն Սեպուհ Գալփաքեան եւ «Հանրապետութիւն» կուսակցութեան անունով՝ Տիար. Արամ Սարգսեան, մինչ ներկաները եւս մօտեցան յուշարձանին եւ այնտեղ տեղադրեցին գերեզմանատան մուտքին տրամադրուած մեխակները:

Ս.Դ.Ն.Կ Աւստրալիոյ Վարիչ Մարմինի երիտասարդ անդամներէն Պրն Յարութ Օզճեան հակիրճ խօսքերով հանդէս եկաւ:

Յարգանքի տոյն հանդիպումը իր աւարտին հասաւ «Ուխտի Հրաւեր» երգով:



Չորեքշաբթի, 26 Ապրիլի երեկոյեան Արեւմտեան Սիտնիի հայ Դատի գրասենեակի Հայկական Յեղասպանութեան նուիրուած ձեռնարկը կատարուեցաւ «Պաթմանեան» սրահին մէջ, որուն նախորդեց «Կարգ բարեխօսական Սրբոց Նահատակացն» արարողութիւնը «Ս. Երրորդութիւն» Եկեղեցոյ շրջափակին մէջ, խաչքարին դիմաց: Ձեռնարկին մաս կազմած էին Ս. Երրորդութիւն եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցի աշակերտները Պարոյր Սեւակի «Մենք Քիչ ենք, բայց Հայ ենք» արտասանութիւնով եւ «հայորդիք» երգով: Ձեռնարկը փակուեցաւ Քահանայ Հօր Պահպանիչով:



Մարիա Թաշճեան Թոգմաքճեան

ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ

Շաբաթ 1 Ապրիլին Հայ համայնքը հաւաքուեցաւ Մէտոուտի Համայնքային Կեդրոնին մէջ հանդիպելու համար Կլէնտլէն ժամանած Տիկին Քաթրին Եսայեանի հետ, որուն կ'ընկերանար ամուսինը՝ Պրն Էտուարտ Եսայեանը: Եսայեանները բնիկ Պարսկահայ են, որոնք մօտ 50 տարի առաջ հաստատուած են Լոս Անճելէս: 2011-էն ի վեր Տիկին Եսայեան յօդուածագիր է հարիւրամեայ պատմութիւն ունեցող եւ Լոս Անճելէս տպուող Ասպարէզ օրաթերթին: Անոր սիւնակները ընդհանրապէս կը վերաբերին հայկական գաղութներուն եւ Հայ համայնքներուն: Տիկինը, որ Օքլանտ այցելած էր մի քանի օր առաջ, խնդրած էր համայնքային հաւաք մը կազմակերպել, որպէսզի ան ծանօթանար համայնքին եւ յառաջիկային գրէր այդ մասին իր սիւնակներէն մէկուն մէջ:

Տիկին Եսայեան իր խօսքին մէջ անդրադարձաւ իր կատարած բոլորովին կամաւոր աշխատանքին մասին: Ան գրած է Արժանթինահայ, Պրագիլահայ, Գանատահայ եւ 30-ի մօտ այլ Հայ համայնքներու մասին: Իր յաջորդ այցելավայրերն են Մելպուրնն ու Սիտնին:

Համայնքի զաւակներէն քառասունէ աւելի անհատներ ներկայ էին հաւաքին: Տրուած ըլլալով որ յաջորդ օրը Ծաղկագարդ էր, տիկինները ձիթենիի ոստեր եւ տերեւներ բերած էին իրենց հետ, որոնցմով խաչեր հիւսեցին, պահպանելով Ծաղկագարդին խաչ պատրաստելու եւ կործքերուն վրայ ամրացնելու հայկական ավանդութիւնը:

Տիկին Եսայեան մեծապէս տպաւորուած էր Օքլանտի այս «փոքր Հայ ընտանիք»-էն:

Ներկաները ճաշակեցին տիկիններուն պատրաստած համեղ ճաշերն ու քաղցրաւենիները, ի միջի այլոց՝ Նոր Զելանտայի Հայկական Միութեան ատենապետուհի, Տիկին Հերմիկ Սուգիասեանի տարեդարձին կարկանդակը, անոր մաղթելով առողջ տարիներ եւ կորով՝ համայնքային իր աշխատանքներուն մէջ:

Ուրբաթ 14 Ապրիլի երեկոյեան, Սիտնին Օքլանտ ժամանեց Առաջնորդ Սրբազան Հայրը՝ Բարձր Տէր Հայկազուն Արքեպիսկոպոս Նաճարեանը մատուցելու համար Զատկական Պատարագ: Յաջորդ օր՝ Շաբաթ, ժամանեց Բարեշնորհ Վարդան Սարկաւազ Էլմասեան:



Շաբաթ 15 Ապրիլի առաւօտուն, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ ծխական խորհուրդին, Զուարթնոց երգչախումբի կարգ մը անդամներու եւ Բարեշ. Նշան Սարկաւազ Պասմաճեանի, ընդհանուր հոգեհանգիստ կատարեց **North Shore Memorial Park** գերեզմանատան մէջ, ուր Հայ համայնքի զաւակներ թաղուած են, որմէ ետք՝ օրինեց գերեզմաններ ընդառաջելով հաւատացեալներու խնդրանքին:

Շաբաթ իրիկուն տեղի ունեցաւ Սուրբ եւ անմահ Պատարագ Թաքափունայի Սուրբ Պետրոս Անկլիքան եկեղեցոյ մէջ: Բարեշնորհ Վարդան Սարկաւազի ընկերակցութեամբ եւ ղեկավարութեամբ՝

Ջուարթոնց երգչախումբը կատարեց երգեցողությունը: Յակոբ Երևուզեան կատարեց բուրվառի պարտականությունը, պատանհներ՝ Դաւիթ Սարգիսեան (Հայերէնով) եւ Վազգէն Վարդանեան (անգլերէնով) կարդացին Ճաշու գիրքը: Աշոտ Գրիգորեան կատարեց խոստովանանքը: Սրբազան հօր սպասարկեց Նշան Սարկաւագ:

Հրաշափառով սկսուած եպիսկոպոսական պատարագին ներկայ էին Անկլիքան եկեղեցոյ վարդապետ Իվիցա Կրէկուրէք եւ քահանայուհի Ճոաննա Ֆիլտինկ (Fielding) եւ ամուսինը՝ Տոքթ Տէյվիտ Ֆիլտինկ, որոնք մեծ բարեկամներ են Հայ եկեղեցոյ եւ մեծ յարգանք ունին Սրբազան հօր նկատմամբ:



Քառասունի մօտ ներկայ հաւատացեալները լսեցին Սրբազան հօր երկլեզու քարոզը, որուն ընթացքին Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց հիւրերուն եւ քարոզեց բնաբան ունենալով «Ինչո՞ւ ողջը մեռելներուն մէջ կը փնտռէք» եւ յստակօրէն բացատրեց թէ ինչ էր Յարութեան խորհուրդը: Ան քաջալերեց գաղութի հայութիւնը իրարմով բռունցք դառնալ: «Դուք էք այսօրուան առաքեալները որոնք պիտի պահեն եկեղեցի: Վերանայեցէք ձեր յանձնառութեանց եւ այս օրը ըրէք ձեր վերանորոգման օրը, որպէսզի քրիստոնէական կրակը վառ մնայ ձեր եւ ձեր զաւակներուն հոգիներուն մէջ», պատգամեց Սրբազանը:



Ապա, կողքի սրահին մէջ տեղի ունեցաւ թեթեւ հիւրասիրութիւն-ընթրիք: Համայնքի Տիկիները ներկած էին նաեւ հաւկիթ: Զատկէն մէկ շաբաթ անցած ըլլալու հանգամանքը ոչինչ փոխեց հաւկթախաղի ստեղծած հաճելի մթնոլորտէն: Բոլոր տարիքներու ներկայացուցիչներով համայնքի զաւակները իրարմէ իրենց կարօտը առին եւ ուշ գիշերին բաժնուեցան իրարմէ:

Թղթակից



ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ



Ծաղկազարդի Տօնը տարիներ առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հռչակուած էր մանուկներու օրհնութեան օր:

Այս առիթով, 2 Ապրիլի առաւօտեան Սուրբ Տաճարի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Անդաստանի արարողութիւն եւ մանուկներու օրհնութեան կարգ:

Ծաղկազարդի Պատարագը մատուցուեցաւ Սուրբ Գայանէ վանքին մէջ: Պատարագիչ՝ Վանորէից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպիսկոպոս Տիգրանեան:

Սրբազան հայրը անդրադառնալով օրուան խորհուրդին՝ նշեց. «Ծաղկազարդին Երուսա- էր մի քանի խումբերու, սակայն Մեսիայի համընդհանուր շահերը զետեղած էր մէկ տեղ:

ղէմի ժողովուրդը քաղաքական առումով բաժնուած գաղափարը Երուսաղէմի բնակիչներու անհատական եւ Փարիսեցիներն ու սադուկեցիները, մաքսա- տրներն ու զելոտները մէկ կողմ էին դրած քաղաքական եւ վարդապետական տարա- ձայնութիւնները եւ եկեա՛ծ էին գտնելու իրենց թէ՛ անհատական եւ թէ՛ միասնական փրկու- թիւնը»:

Սրբազանը յորդորեց չնմանիլ Երուսաղէմի այն օրերու մարդկանց, ովքեր իրենց հագուստները եւ ճիւղերը տարածեցին Տիրոջ առաջ, սակայն օրեր յետոյ խաչեցին, այլ պատասխանատուութեամբ վերցնենք մեր



խաչը եւ ինքնաբնութեամբ անցինք Գողգոթայի ճանա- պարհը: Հուսկ ապա վերստին կատարուեցաւ մանուկներու օրհնութեան կարգ:

Նոյն օրը Վեհափառը ընդունեց ու իր հայրապետական օրհնութիւնը բաշխեց հայաստանեան տարբեր թեմերու եկեղեցիներուն մէջ սպասաւորող դպիր մանուկները եւ երգչախումբերու պատանի երգչուհիները:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
ԸՆԴՈՒՆԵՑ
ՄԵՔՍԻՔԱՅԻ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆՆԵՐ**

Ապրիլ 3-ին Վեհափառը ընդունեց Մեքսիկայի ծերակուտականներ Ալեխանդրայ դել Կարմեն Լեոն Գաստելումի եւ Ինդիթայ Կեմպիս Մարտինեսի գլխավորած պատուիրակությունը՝ ուղեկցութեամբ ՀՀ-եան Մեքսիկայի պատուաւոր հիւպատոս Նիկոլայ Կոստանդեանի:



Հայոց Հովուապետը իր երախտագիտութիւնը յայտնեց Մեքսիկայի Սենատին Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալուն եւ գնահատեց երկու ծերակուտականները միջազգային աստեաններու մէջ արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան ի նպաստ անոնց ջանքերը: Զրոյցի ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Արցախի դիմագրաւած հարցերուն:

ծերակուտականները միջազգային աստեաններու մէջ արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան ի նպաստ անոնց ջանքերը: Զրոյցի ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Արցախի դիմագրաւած հարցերուն:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ
ԽՈՐՈՒԱԹԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄԱՄԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

Ապրիլի 4-ին, Վեհափառը ընդունեց Խորուաթիայի Հանրապետութեան խորհրդարանի Խորուաթիա-



Հայաստան բարեկամական խումբի ղեկավար Դաւոր Իւոյ Շտիքի գլխավորած պատուիրակութիւնը՝ ուղեկցութեամբ ՀՀ ԱԺ պատգամաւոր Հայկ Մամիջանեանի:

Ողջունելով հիւրերը, Նորին Սրբութիւնը կարեւոր նկատեց խորհրդարանական փոխայցելութիւնները բարեկամական կապերու ամրապնդման ի նպաստ: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ տարածաշրջան առկայ մարտահրաւերներուն, Արցախի շրջափակման եւ մարդասիրական ճգնաժամին, տակաւին գերութեան մէջ պահուող հայորդիներուն:

Իր հերթին Դաւոր Իւոյ Շտիք ընդգծեց, որ Հայաստանն ու Խորուաթիան, քրիստոնէայ երկրներ, ունին նոյն արժեհամակարգը, որով աւելի կ'ամրապնդուի անոնց սիրալիր յարաբերութիւնը:

**ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷԶՄԻԱՍՆԻ ՄԷՋ**

Ապրիլի 6-ին՝ Աւագ հինգշաբթի, Ս. Էջմիածնի մէջ նշուեցան Յիսուս Քրիստոսի Վերջին ընթրիքը եւ Սուրբ Հաղորդութեան խորհրդի հաստատումը ինչպէս նաեւ Մայր Աթոռի Սուրբ Տրդատի բաց խորանին կատարուեցաւ Ոսնյութայի կարգը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրհնեց խորանին վրայ դրուած ջուրն ու իւղը: Այնուհետեւ, Աստուածորդու օրինակով, լուաց եւ իւղով օծեց Մայր Աթոռի միաբաններ՝ Գերաշնորհ



Տ. Դանիէլ Էպիսկոպոս Ֆընտրգեանի, Գարիկ սարկաւագ Կաղէյեանի, Անուշաւան սարկաւագ Ասատրեանի, Կ. Պոլսի Հայոց պատրիարքութեան միաբան Հոգեշնորհ Տ. Զատիկ վարդապետ Պապիկեանի, Գետրգեան հոգեւոր ձեւարանի Զ լսարանի սան Նարեկ սարկաւագ Թեմուրեանի, ՀՀ ՊՆ Ն գորամասի ժամկետային զինձառայողներ Վռամ Աթոյեա նի, Սամուէլ Ասլանեանի, «Էօրնէկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Ֆելիքս Առաքելեանի, Սուրէն Մովսիսեանի, Մայր Աթոռի «Քիւրքչեան» երեխաների աջակցութեան կեդրոնի սան Աշոտ Ասատրեանի, ինչպէս նաեւ այլ մանուկներու՝ Ռոբերտ Ալիխանեանի, Ժորժ Կարայեանի, Հայկ Սարգսեանի եւ Լեւոն Քեսարեանի ուղերթը:

ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊՍՏԱՐԱԳԸ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԷ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ



Ապրիլի 8-ին՝ Ճրագալոյցի պատարագիչն էր դիւանապետ Գերաշնորհ Տ. Արշակ արքեպիսկոպոս Խաչատրեանը:

Արշակ Սրբազան, իր քարոզին մէջ նշեց. «Շուրջ երկու հազար տարիներ շատեր փորձեցին կասկածի տակ առնել այս հրաշքի վաւերականութիւնը: Ան ընդգծեց որ Քրիստոսի Յարութեան հրաշքը յարութիւն առնելու յոյսը կը պարգեւէ բոլորին:

«Քրիստոսի Յարութեամբ երկրաւոր կեանքը կը դառնայ պատուանդանը յաւիտենական կեանքին: Այս պատճառով է, որ Քրիստոսի Յարութեանը հաւատացողները նայում են անդին քան մահը: Քրիստոսի Յարութեան հաւատացողները հայրենիքը չեն դիտարկեր սոսկ որպէս բնակավայր, այլ ինքնութեան սրբազան մասունք, եւ աստուած-

սիրութիւնը կը միահիւսեն հայրենասիրութեան», - ըսաւ Սրբազանը:

Ապա Վեհափառ Սուրբ Սեղանի կանթեղէն վառեց Քրիստոս խորհրդանշող կենսատու մոմը:

ՀԱՅՐԱՊԵՏԱՎԱՆ ՍՈՒՐԲ ՊՍՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ապրիլի 9-ին Վեհափառ Հայրապետը Զատկական Պատարագ մատուցեց Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ մէջ: Ստորեւ՝ Վեհափառ Հօր պատգամը՝ յապաւումներով.

«Երբ մարդու Որդին գայ, արդէօք երկրի վրայ հաւատ կգտնի» (Ղուկ. 18.8):

Միրելի բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփիւռս,

Այսօր համախմբուած մեր եկեղեցիների յարկերի ներքոյ՝ փառաբանում ենք յարուցեալ Փրկչին՝ աւետելով. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

...Քրիստոսի խաչելութիւնից մինչ օրս փարիսեցիական խարդաւանքները, յուղայական մատնութիւնները, պիղատոսեան դատավարութիւնները արհաւիրքներ են բերում աշխարհում, արդարեւ, նոր ուժգնութեամբ է հնչում Քրիստոսի խօսքը. «Երբ մարդու Որդին գայ, արդէօք երկրի վրայ հաւատ կգտնի»:

21-րդ դարը լուսաւորեալ նոր դարաշրջան պիտի լինէր: Բայց որքան անմեղ ժողովուրդներ են պատերազմների գողգոթաներում նեղութիւնների ու վշտերի ենթարկուում եւ պայքարում գոյաբանական սպառնալիքների դէմ: Մենք եւս անցանք 44-օրեայ պատերազմի, Հայաստանի սահմանների վրայ յարձակումների աղետալի իրողութիւնների միջով: Մեր հայրենիքը ներքին եւ արտաքին մտահոգիչ

մարտահրաւերների պայմաններում դիմակայում է անվտանգ ու խաղաղ կեանքի ապահովման ամենօրեայ փորձությունների: Հարագատ Արցախը տեսական ժամանակ շրջափակուած է եւ դիմագրաւում է անասելի դժուարությունների ու գրկանքների: Այս անհանգստացնող, վտանգալի երեւոյթների յանդիման, մեր սրտերում կրելով չամոքուող ցաւը մեր նահատակ, անյայտ կորած ու վիրաւոր զաւակների, ակնատես ենք նաեւ ցաւալի այլ իրավիճակի, թէ ինչպէս են թշնամանքի, ատելութեան դրսեւորումները բաժանարար պատնէշներ դնում աշխարհասփիւռ մեր ժողովրդի կեանքում, խարխլում ազգային միաբանութիւնը: Ակնատես ենք, թէ ինչպէս են անտեսւում դարերով նուիրագործուած աւանդոյթները, մեր ինքնութեան հիմնասիւնը հանդիսացող արժեհամակարգը, խաթարում մեր ժողովրդի ազգային-հոգեւոր անվտանգութիւնը, որը մեծապէս կարեւոր է մեր դէմ ծառացած լրջագոյն մարտահրաւերների յաղթահարման համար: Մեր կեանքում տեղ գտած նմանօրինակ ընթացքները, յատկապէս յետպատերազմեան շրջանում, աւելի են ծանրացնում կրած վշտի ու կորուստների ցաւը: Եւ այսպիսի իրադրութեան մէջ ամենքիս համար առաւել ուժգնութեամբ է հնչում Քրիստոսի հարցադրումն ու յանդիմանութիւնը. «Երբ մարդու Որդին գայ, արդեօք երկրի վրայ հաւատ կգտնի՞» (Ղուկ. 18.8), «Ու՞ր է ձեր հաւատը» (Ղուկ. 8.25):

Յիրաւի, երբ պետական եւ հասարակական կեանքում արդարութիւնը եւ ճշմարտութիւնը դադարում են լինել առանցքը ձեռնարկումների ու իրագործումների, շարունակելու ենք առերեսուել պիղատասականութեան դրսեւորումների: Փարիսեցիական խարդաւանքները շարունակուելու են, քանի դեռ քինախնդրութեան եւ յիշաչարութեան մղումով սփռում են զրպարտանք ու անիրաւութիւն: Յուդայական մատնութիւնները շարունակուելու են, քանի դեռ չեն դադարում ուրանալ Աստծուն ու սրբութիւնները, արժեզրկել հայրենիքի նուիրական գաղափարը: Մինչդեռ պետութիւն, հասարակութիւն եւ ընտանիք ամուր ու զօրեղ են, երբ խարսխում են աստուածադիր պատգամների, անանց արժեքների վրայ, որոնք բարօրութեան ուղենիշ են եւ առաջնորդում են երկնային զօրակցութեամբ արդիւնաւորելու ջանքերը՝ ի խնդիր ժողովրդի ապահովութեան, առաջընթացի ու բարգաւաճման:

Միրելիներ, հաւատքը յաղթանակ է փորձությունների դէմ, որին բնորոշ չէ վախի, յուսահատութեան, անկումի ոգին: Որքան ծանր ու անելանելի թուայ ներկայ իրավիճակը, այնքան աւելի զօրաւոր ու հաստատուն պետք է լինի մեր հաւատը: Հաւատքը պիտի արտայայտուի իւրաքանչիւր քայլի ու արարքի մէջ՝ անձնական, հաւաքական ու համազգային անդաստանում: Հաւատքով ու միաբանութեամբ ենք յաղթահարել մեր պատմութեան ընթացքում բազմաթիւ արհաւիրքներ, վերակերտել մեր անկախ պետականութիւնը եւ ստեղծագործ կեանք վերընձիւղել հայրենի հողի վրայ: Այսօր էլ Աստծոյ հանդէպ, մեր ուժերի հանդէպ հաւատն է, որ պիտի զօրացնի մեզ՝ դուրս գալու ճգնաժամային իրավիճակներից, կառուցելու լուսաւոր ապագայ:

Այս մաղթանքով եւ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» աւետիսով եղբայրական Մեր ողջոյնն ենք յղում մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալեանին:

Յարութեան զօրացնող ուժն ենք հայցում Փրկչից յատկապէս Արցախի Մեր զաւակների համար, որպէսզի խիզախ ու անկոտորում լինեն ոգով եւ արցախցուն բնորոշ ամուր եւ անյողողող կամքով յաղթահարեն իրենց առջեւ ծառացած բոլոր փորձությունները:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի





**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ՇՆՈՐՀԱԻՈՐԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
ԱՇԽԱՏԱԿՑՈՒՇԻՆԵՐԻՆ ԱԻԵՏՄԱՆ
ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ**

Ապրիլի 11-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մուրբ Աստուածածնի Աւետման տօնին առիթով հանդիպում ունեցաւ Մայր Աթոռի տարբեր կառոյցներու մէջ պաշտօնավարող աշխատակցուհիներուն հետ: Վեհափառը, ընդգծեց կնոջ սրբազան առաքելութիւնը եւ բերած նպաստը հայրենիքի հզօրացման, շէնացման եւ առաջընթացին:

ՎԵՀԱՓԱՌԸ ՑԱԻԱԿՑԵՑԱԻ ԶՈՀՈՒԱԾ ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ

Վեհափառը իր ցաւակցութիւնը յայտնեց Տեղ գիւղի սահմանային հաստուածին մէջ աղբրեջանական սաղրանքին պատճառով Ապրիլ 11-ին զոհերու եւ վիրաւորներու ընտանիքներուն ու հարազատներուն:

**ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՒԱՆԻ
ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱԻՒՆԵԱՆԸ**

Անդրադարձ կատարուեցաւ Երեւանի մէջ Հայոց Եկեղեցոյ առաքելութեան արդիւնաւորման ի նպաստ ձեռնարկուող քայլերուն, մասնաւորապէս եկեղեցիներու բարուոք պահպանման եւ տարածքներու բարեկարգման խնդիրներուն: Այս առումով կարելորուեցաւ գործակցութիւնը քաղաքապետարանի հետ՝ ապահովելու երեսնցիներու հոգեւոր կեանքի պատշաճ կազմակերպումը:



**ԱՊՐԻԼ 17-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀԲԸՄ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ԱՏԵՆԱՊԵՏ
ԱՆԹՈՆԻՈ ՍԱՐԱՖԵԱՆԻ ԳԼԽԱԻՈՐԱԾ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

Վեհափառը գոհունակութեամբ արձանագրեց, որ արգենտինահայ գաղութը առանձնայատուկ կազմակերպութիւն ունի, հայ կեանքի եւ ազգային արժէքներու նախանձախնդիր պահպանմամբ: Ամենայն Հայոց Հայրապետը գնահատանքով անդրադարձաւ նաեւ համայնքի կրթական հաստատութիւններու ազգօգուտ եւ նուիրեալ գործունէութեան:



**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐՈՒԱՆ ԱՌԻ ԹՈՎ**

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,
...Այսօր Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի մէջ, ազգով համախմբուած եկեղեցիներու մէջ, յուշակոթողներու առջեւ, աղօթք կը բարձրացնենք առ Աստուած՝ խնդրելով Հայոց ցեղասպանութեան սուրբ նահատակներու բարեխօսութիւնը, որպէսզի միաբան ու աննկուն կամքով կարողանանք դիմագրաւել արհաւիրքներն ու սպառնալիքները...:
Թող Երկնաւոր Տէրը խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւէ Հայաստան ու Արցախ մեր հայրենիքին: Ամէն:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԱՅՅԵԼԵՑ
ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ**

Ապրիլի 24-ին Վեհափառը այցելեց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ ոգեկոչելու Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակներու յիշատակը:
Անմար կրակին առջեւ, կատարուեցաւ սուրբ նահատակներու բարեխօսական կարգ: Օրուան առիթով Ծիծեռնակաբերդի յուշահամալիր էր բերուած նաեւ Հայոց Ցեղասպանութեան սրբոց նահատակաց մասունքաբանը:



**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՆԻ ՄԷՋ**



Ապրիլի 24-ին մատուցուեցաւ Պատարագ Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակներու յիշատակի օրուան առիթով: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան հոգեւոր ճեմարանի եւ Վազգէնեան հոգեւոր դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Շահէ ծայրագոյն վարդապետ Անանեանը:

Քարոզին մէջ Հայր Սուրբը ըսաւ. «108 տարի շարունակ մեր ազգային յիշողութեան մէջ ցեղասպանութեան փաստը մնում է իբրեւ անհերքելի, անջնջելի ամօթ, որ խարանուած է այն ժամանակուայ, եւ ինչու չէ, այսօրուայ մարդկութեան ճակատին՝ իբրեւ առաջին

ցեղասպանութիւն: Այդ հարիւր ութը տարիներից ութը շատ կարելու է, որովհետեւ մենք ութը տարի շարունակ այլեւս ոչ թէ ցեղասպանութեան զոհերին ենք ոգեկոչում, այլ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից սրբադասուած մարտիրոսներին՝ նահատակներին:

...Աշխարհի գրեթէ բոլոր կոտորածներն ու ցեղասպանութիւնները անտարբերութեան ծնունդ են: Սրա պատճառով ոչ միայն մարդկային կեանքի ցեղասպանութիւն կարող է տեղի ունենայ, այլեւ՝ մտքի, հոգու, լեզուի, հոգեւոր արժէքների ցեղասպանութիւն: Մարդկային եւ համազգային անտարբերութիւնը քանդում է հնարաւոր բոլոր սահմանները:

Նահատակների խորհուրդը մեզ հաւատարմութեան պատգամ է: Հաւատարմութիւն այն բոլոր արժէքների հանդէպ, որոնք երբեւիցէ մեր ազգի կեանքում ստեղծուել եւ շարունակուում են ստեղծուել: Եթէ

այս հաւատարմութիւնը չկայ, եթէ մենք անտարբերութեամբ փորձում ենք մեր կեանքն ապրել իբրև բոլոր կենդանիներին տրուած ժամանակամիջոց, ուրեմն մենք այդ հաւատարմութեան խորհրդի մէջ չենք: Մենք պայքարում ենք, որպէսզի մնանք հաւատարմութեան խորհուրդի մէջ»:

ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Ապրիլի 24-ին Վեհափառը ընդունեց Ֆրանսայի Ծերակոյտի մէջ Լեռնային Ղարաբաղի հարցով խումբի հիմնադիր եւ նախագահ, Արեւելքի քրիստոնէաների հարցով կապի խմբի նախագահ Բրունոյ Ռետայոյի գլխատրած պատուիրակութիւնը:

Վեհափառ Հայրապետը իր երխատագիտութիւնը յայտնեց Ֆրանսայի Սենատին Հայոց Ցեղասպանութեան ճանաչման, դատապարտման, ինչպէս նաեւ Արցախի անկախութեան մասին բանաձեւի ընդունման համար:

Սմենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ իր գնահատանքը յայտնեց Ֆրանսայի իշխանութիւն-

ներուն Հայաստանին եւ հայ ժողովրդին ցուցաբերած աջակցութեան եւ զօրակցութեան համար:

Իր հերթին Բրունոյ Ռետայոն ընդգծեց, որ ջանքեր կը տարուին միջազգային ստեաններուն մէջ բարձրաձայնելու արցախահայութեան ազատ ու անկախ ապրելու իրաւունքի պահանջը: Այս առիթով պատուիրակութեան ղեկավարը տեղեկացուց, որ Ֆրանսայի Սենատին մէջ ստեղծուած է Արցախի հարցով յանձնախումբ, որու նպատակն է աջակցիլ ու զօրակցիլ արցախահայութեան:

«ԱՐՑԱՒԻ ՎՏԱՆԳՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ապրիլի 28-ին Գերմանիոյ Քելոն քաղաքին մէջ վտանգուած քրիստոնէական մշակոյթը» թեմայով: Կաթողիկէ եպիսկոպոսաց ժողովի, Գերմանիայի Թեմի համագործակցութեամբ: Ժողովին հրաւիրուած էին մասնագէտներ Հայաստանէն, Գերմանիայէն եւ այլ երկրներէ: Հայկական կողմէն համաժողովին մասնակցեցան Գերմանիոյ Առաջնորդ Գերաշնորհ Ս. Սերովբէ եպիսկոպոս Իսախանեանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան գրասենեակի տնօրէն Հոգեշնորհ Ս. Գարեգին վարդապետ Համբարձումեանը, ՀՀ մարդու իրաւունքներու նախկին պաշտպան Արման Թաթոյեանը, յուշարձանագէտ Համլետ Պետրոսեանը:

տեղի ունեցաւ միջազգային համաժողով՝ «Արցախի Համաժողովը կազմակերպուած էր Գերմանիոյ Աւետարանական եկեղեցւոյ եւ Գերմանիայի Հայոց



Համաժողովը բաղկացած էր երկու մասէ: Առաջինին մէջ տեղի ունեցան աշխատանքային-մասնագիտական փակ քննարկումներ, ուր հայ եւ օտար մասնագէտները ներկայացուցին Արցախի հայկական-քրիստոնէական հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանման կարեւորութիւնը, Ադրբեջանի կողմէն մարդու իրաւունքներու եւ ընդհանրապէս միջազգային իրաւունքի ոտնահարումները, հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացման փաստերը, Արցախը միջազգային պաշտպանութեան տակ առնելու հնարաւորութիւնները:

Համաժողովի երկրորդ մասը բաց էր նաև հայ եւ օտար այցելուներու համար: Բանախօսութեամբ հանդես եկան Տ. Գարեգին վարդապետ Համբարձումեանը, ինչպէս նաև Մայր Աթոռի Արցախի ժառանգութեան պահպանութեան գրասենեակի անդամ դոկտոր Եասմին Դում-Թրագուլը՝ «Հայկական յուշարձաններու ոչնչացումը, օտարումը եւ իւրացումը աղբրեջանական իշխանութիւններու կողմէն, Արցախի Աղբրեջանի կողմէն վերահսկուող տարածքներուն մէջ եւ Մայր Աթոռի Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան պաշտպանութեան գրասենեակի գործունէութիւնը», նիւթով, իրաւաբան Սառա Բարայեանը՝ «Հայ քրիստոնէական մշակոյթի փրկութեան ուղիները միջազգային իրաւունքի տեսանկիւնէն» եւ աստուածաբան Հարալդ Զիւրմանը «Քրիստոնէայ ժողովուրդներու մշակութային ժառանգութիւնը ընդհանուր համատեքստում» թեմաներով: Համաժողովը վարեց Գերմանիոյ նախկին արտգործնախարար Մարկուս Մէկելը:

ՎԵՀԱՓԱՈՐ ԸՆԴՈՒՆԵՑ ՖԻՆԼԱՆՏԱՅԻ ԼՈՒՏԵՐԱԿԱՆ-ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻԶ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ՍԵՊՊՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԵԿԿԻՆԵՆԸ ԵՒ ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՏԻՄՈՅ ՌՈՍՔՈՒԻՍԸ



Վեհափառ Հայրապետը, ողջունելով հիւրերի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ընդգծեց, որ նման այցելութիւնները նոր ուժականութիւն կը հաղորդեն Եկեղեցիների ջերմ յարաբերութիւններուն: Անդրադարձ կատարուեցաւ տարածաշրջանի առկայ մարտահրաւերներուն Աղբրեջանի ոտնձգութիւններին, Արցախի շրջափակման:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԷՆ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ապրիլի 30-ին Վեհափառը ընդունեց Արգենտինայի հասարակական գործիչներէն, լրագրողներէն, իրաւաբաններէն եւ գործարարներէն կազմուած պատուիրակութիւնը՝ ուղեկցութեամբ արգենտինահայ գործարար Խուան Պարլոյ Գեչիչեանի:

Տիար Գեչիչեանը, Նորին Սրբութեանը ներկայացնելով հիւրերը, տեղեկացուց, որ պատուիրակութեան անդամները Հայաստան են ժամանած մօտէն ծանօթանալու հայ ժողովրդին, մշակոյթին, կրօնին, պատմութեան եւ հոգևոր արժէքներուն:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնութիւնը տալով ներկաներուն, գոհունակութեամբ ընդգծեց, որ երկու երկիրներու յարաբերութիւնները յատկանշուած են սերտ բարեկամութեամբ:

Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց հիւրերու հարցերուն, որոնք կը վերաբերէին միջեկեղեցական յարաբերութիւններուն եւ դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման մէջ Քոյր Եկեղեցիներու հոգևոր պետերու կողմէ ձեռնարկուած քայլերուն:



DIOCESAN NEWS

Sunday 2 April – As informed in the previous issue of Paros, the Primate His Eminence Archbishop Haigazoun Najarian had left on a pastoral visit to Kolkata India, as the Pontifical Legate of India and the Far East.

On the occasion of Palm Sunday, Archbishop celebrated an Episcopal Holy Mass in the Armenian Apostolic St Nazareth Church, with the Superintendent of the Armenian College and Philanthropic Academy of Kolkata (formerly Calcutta), Very Reverend Father Dajad Dzadourian and his Deputies Ardrzoon Mikaelian and Very Reverend Haig Mikaelian. Archbishop Najarian delivered his homily relevant to the occasion.

The students of the College participated in Holy Mass, some serving as acolytes. Two days prior, on 31 March, the Archbishop visited the Philanthropic Academy where he met with the students and teachers. The Primate's visit coincided with the 202nd anniversary of the Founders' Day which is an event that is always commemorated in a grand way in the Academy Hall. Alongside the clergy of the Indian Orthodox and Armenian Apostolic Churches, the Principal of the Academy Debanjali Chodri, and Board Members Sunil Sobti and Suzanne Ruben were also attending.

Before closing in prayer, Archbishop emphasised the importance of nurturing the younger generation and developing their talents acknowledging the Philanthropic Academy's efforts in that regard.

Refreshments were served following the commemoration when the Archbishop was invited to cut the 202nd anniversary celebratory cake. Indeed, it was a befitting creative program.

Archbishop Najarian returned to Sydney on Wednesday 5 April.



Thursday 6 April – In the Holy Resurrection Church, Archbishop Haigazoun Najarian celebrated an episcopal Holy Mass dedicated to the Last Supper of Christ, and delivered the moving and relevant sermon. He presided during the afternoon ‘Washing of the Disciples Feet’ service and in the evening presided over the Khavaroum/Darkness Vigil.

Friday 7 April – In the morning the Crucifixion service was conducted and the Burial service in the afternoon followed by a general requiem service. In his brief sermon, Archbishop Najarian explained the meaning and magnitude of the crucifixion and burial. He also highlighted the meaning of the darkness, the absence of light. Light is God Himself, Christ is the Light, and because of this, darkness cannot exist in our lives when Christ dwells in us.

Saturday 8 April – As has become customary, Archbishop Najarian celebrated the Easter Eve service in Holy Trinity Church. For details, please see Parish News on page 38.



Sunday 9 April – The day of Victory, Christ is Risen. This is a wonderful event, a joyous day, and the day culminating in victory over evil. Episcopal Holy Mass was celebrated by the Primate in Holy Resurrection Church with Archpriest Reverend Father Bartevo Karakashian and Reverend Father Avetis Hambardzumyan participating. The ranks of deacons filled the corners of the Holy Altar, dressed in their red robes, adding to the grandeur of the joyous celebration. In his Easter message, Archbishop explained why, on this Resurrection Day, our spirits are stimulated. With quotations from the Holy Bible, he explained that it is by Christ’s Resurrection, that the tradition and sacrament of Christianity was created. He described the spiritual transformation of Christ’s apostles, during those 40 days after Christ’s resurrection and how it led to their spreading the Good News across the world, including, in Armenia. Considering they were able to spread the Good News during the Byzantine era, from North Africa to the Middle East, and which today, is of a Muslim majority, he posed the question, how is it that the Armenians were able to survive as Christians, having endured the Golgotha of Golgothas for centuries, and up to the present times. This has been possible because Armenians

have not lost Christian hope, clinging to their faith, enabled to endure and live. Archbishop instructed Armenian parents to equip their children with Christian faith. “Struggling should be our mission, because Christianity means struggle until victory; it means life and eternity, it means hope and not giving in to hardships. It is therefore, our duty to live Christianity every day, every hour. When we discipline our children without faith, we are knowingly preparing candidates for darkness, and the Christian faith is the victory of light over darkness,” affirmed the Primate. Referring to our obligations, he emphasised the importance of gratitude and quoting from the Divine Liturgy, *“I offer, of Yours, unto You”*, advising the congregation that it is the obligation of each individual to return to God, a portion of what He has granted us. As Christians, we have a duty outside of the Armenian community, as a collective universal church, to care for the world until Christ’s second coming. As for the Armenian people, the Archbishop stated, “we still have hope that God will grant us the wisdom, to unite as one fist. Without a common voice, we cannot defeat the challenges we face. As a nation and peoples, we can live, but we must know our destination, we must know how to preserve our national heritage and how to move forward together. In love, it is modesty, humility and Christian living that will keep us strong and united. Let us rise nationally, with our God-given talents and combining them, let us use them for the good and justice and in this way, we can move forward to a bright future”, concluded Archbishop.

Monday 10 April - Remembrance of the Dead - Accompanied by the parish priests, Archpriest Reverend Father Norayr Patanian, Archpriest Father Barteve Karakashian and Father Avetis Hambardzumyan, Archbishop Najarian officiated a general requiem service in the Armenian Section of Macquarie Park Cemetery, before the Genocide Memorial Monument. Close to 60 community faithful attended. During the service, in his succinct message, Archbishop said, “Today we have come to honour our relatives who have found their rest. We place them in the orders of the victorious church. We have come to renew our vow and to assure them that they live on and the work they commenced; we will continue.”



The parish priests blessed the graves of the late Archbishop Aghan Baliozian, Father Aramais Mirzaian, Very Reverend Father Razmig Boghossian and Deacons Hagop Chahinian, Kevork Janoyan, Hovannes Kharajian and Noubar Yangoyan.

Friday 14 April – Archbishop Najarian left for Auckland New Zealand. On 15 April he celebrated Easter Holy Mass for the small Auckland Armenian community. For details, please read the New Zealand Parish News on page 40.

Sunday 16 April Archbishop returned to his official residence in Sydney and in the afternoon, presided over the Annual General Meeting of the Holy Resurrection Church Parish Council. The meeting table the 2022 Parish Pastor’s and Council’s Activity Reports presented by Reverend Father Avetis Hambardzumyan and Parish Councillor Mrs Arpi Mouradian respectively; the 2022 Financial Reports and 2023 Budget presented by Mrs Laura Artinian; and addressed the questions and comments of the participating parish members.

The election of the new Parish Council and office bearers are listed below:

Mr Zaven Yaghljian - Chairman

Mr Bedros Zorlu - Vice-Chairman

Mr Apig Geozikaraian - Armenian Secretary

Mrs Alice Bakla - English Secretary
Mr Ara Kopoushian - Treasurer
Mr Harout Okjian - Vice-Treasurer
Mr Kegham Anoushian - Councillor
Mr Herman Mahmur - Councillor
Mr Vasken Amirzaian - Councillor
Mr Mihran Keshishian - Councillor

In his closing address, Archbishop Najarian commended the dedicated spirit of service of the Parish Councillors, those current, newly-elected and outgoing. He reflected on the importance of working closely together to encourage greater parish membership and active participation in the church. On this occasion, Paros takes the opportunity to congratulate the newly formed Parish Council and wishes each of the Councillors success in their devoted church service.



Monday 17 April – Archbishop Najarian presided over the periodic meeting of the Armenian Community Welfare Centre Board which examined the new government policies.

Tuesday 18 April – Archbishop Najarian presided over the periodic Diocesan Council meeting when the Agenda and reports to be presented at the upcoming Annual General Diocesan Meeting scheduled for 20 May 2023 were approved. The meeting also affirmed the newly formed Parish Councillors of the Holy Trinity and Holy Resurrection parishes following their Annual General Meetings. The final details of the 6th May cocktail for the Friends of the Diocese with, both current and potentials' list were reviewed, the purpose of which is to tribute the support of sponsors who understand the Diocese's programs and provide an allocated, predetermined sum to cover expenses.

Thursday 20 April – The funeral of the late Sonia Kanjian was held at Holy Resurrection Church presided by Archbishop Najarian accompanied by the Parish Priests. With her husband Mr Loris Kanjian, Mrs Kanjian became the Principal Benefactors of the Diocesan Centre making it possible for the much hoped for construction to be realised. Our endless gratitude to the Kanjians for their devotion and support remains close to our hearts and will forever be etched in the historical archives for future generations to aspire to their spirit of understanding and vision. At this sorrowful time, the Primate, Diocesan Council and Church family extend our heartfelt condolences to Mr Loris Kanjian, his children and grandchildren. Prayers and incense imbued in her loving memory.



Friday 21 April – The Primate, accompanied by Father Avetis Hambardzumyan, Messrs Sarkis Der Bedrossian, Stepan Kerkyasharian, Bedros Zorlu and Chancellor Nishan Basmajian, received the following community leaders in the Diocesan Centre - leaders of the Social Democrat Hnchakian Party in Australia, Mr Sebouh Kalpakian, Kevork Bedrossian, leaders of the Armenian Democratic Liberal Party/*Ramgavar* in Australia Messrs Haig Lepedjian, Vahe Artinian and Mrs Vartouhi Lepedjian, the AGBU Sydney Committee members Messrs Mihran Lepejian and Hovannes Kouyoumdjian, the former RA Prime Minister and Hanrapetutyun Party president Mr Aram Sargsyan and notable Armenian journalist Mr Nver Mnatzaganian.

After Archbishop Najarian welcomed the visitors and made the introductions, he explained how all communities in the Diaspora do all they can, in collaboration with the church and community organisations, to maintain the Armenian profile and identity, always attempting to keep the umbilical cord with Armenia secure, as, where does any Diasporan community get its life blood?



Referring to the general situation of Armenians, Archbishop stated that the Armenian people are a little stunned, especially following the defeat of the 44-day war and driven by their own interests, the larger governments interfere in the affairs of Armenia; our very existence is threatened and appears to be our passage through a pre-Genocide *Yeghern* period.

Mr Sargsyan considered it a natural phenomenon for the large states to interfere in the affairs of smaller states, but in order to take advantage of the created situation, risky decisions must be made in favour of Armenia. He expressed his optimism that

there could not be a large-scale war in Armenia, taking into account the interest of the large states.

In relation to the Diaspora, Mr Sargsyan stated that the Diaspora is very important. There needs to be a ministry not merely a department as 7 million Armenians live in the Diaspora.

The potential of our Diaspora should not be overlooked, but first, we need to have an independent Armenia before we can drive that potential. On the other hand, Mr Mnatzaganian confirmed that what is discussed in Armenia is to be considered in the Armenian and Turkish relations; stating that the Armenian-Turkish relations are multi-layered, and any Armenian government can proceed in the Armenia-Turkey relations.

Mr Stepan Kerkyasharian confirmed that the Diaspora is neglected today, what should have been assigned to the Diasporan Ministry at one time, was not assigned.

The Archbishop pointed out that over the past 30 years up to the present, the potential of the Diaspora has not been tapped into. Mr Sargsyan agreed and continued, “To bring Armenia out of the present state requires volunteers. We have issues concerning unity which need to be addressed immediately.” He gave his sincere criticism of the current government, as the lax judicial system, shortage of judges and also gave his evaluation of a number of works which were achieved during the current government term; the appointment to public office without bribery and serving the Armenian government and not foreign states. He highly commended the positive impact of the Armenian Church and the two Catholicosates in benefiting Armenia.

Friday 21 April – Under the auspices of the Primate, and organised by the Australian Chapters of the SDHP, ADL and AGBU, a commemoration was held in St Annes Anglican Church in Ryde, *“The 108th anniversary commemoration of the Armenian Genocide amid the challenges of Armenia and Artsakh”*.



Attending were His Eminence, parish priests, evangelical ministers, Diocesan Council members, political figures and government representatives. A minute’s silence was observed to honour the memory of our one and a half million martyrs, followed by the opening address and recitation by talented Zani Okjian.


A fitting artistic program included popular Masha Mnchoyan (Hay Zinvor, Abrelou Abril and Yeraz Im Yergir Hayreni), Imogen Pinwiset (piano, Prelude no. 7 Baghdasarian), Nanar Marshlian recited Baruyr Sevag’s (Engadzner), Katalina Dermenjian (Violin, Groong, Gomidas).

The recently elected NSW Member of Parliament for Ryde Mr Jordan Lane delivered an address. The AGBU Alexander Primary School Principal Mr Manoug Demirjian shared the organising committee’s address. The Hanrapetutyun Party founder and former Prime Minister Mr Aram Sargsyan who had been invited to Sydney for this occasion, was invited to the stage to share his message. Mr Sargsyan reflected on the developed and

developing challenges in Armenia, the means to overcome them and the initiatives adopted by the Government. He called for unity and gave assurance that Armenia has the means to defeat the enemy once again.

In his closing remarks, Archbishop Najarian invited the audience to be realistic, stating that no one would help Armenia except the Armenian people and only the Armenian people, with their united efforts in the battle, can regain the violated rights. We cannot place our hope on the foreigner, first and foremost the Armenian people need to place their hope in themselves. “The path to our historical lands is only through present day Armenia and Artsakh,” declared Archbishop. He condemned the complacency to defend Armenia and Artsakh that exists today. We need to learn and correct all the mistakes we made in the past and we will “restore the spirit demanding Artsakh is Ours,” concluded the Archbishop.

Saturday 22 April – The SDHP, RAG and AGBU committees organised a Q&A evening with Mr Aram Sargsyan, attended by Archbishop Najarian and Father Avetis Hambardzumyan. The atmosphere at times was electrified. At the close, the Archbishop urged all to understand and respect differences of opinion and views, without giving way to offence.



Sunday 23 April – Close to 1000 protestors gathered in Hyde Park led by the Homenetmen scouts and marching band marching to Circular Quay with banners raised, calling out slogans demanding recognition and justice for the Armenian Genocide, which was perpetrated 108 years ago. The protestors expressed their anger with banners flying and rehearsed slogans, demanding the Australian Government recognise the Armenian Genocide.

